

16683

891.99

v-19

148

Саруфинов

521

197
PP

891.99
U-79
W

U. 19 d.

ՍԱՆԴԱԼ

Պ Ի Ը Ս Պ

ՊԱՏԿԵՐ

ՏԱՃԿԱ-ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏ

ԽՃԱԿՆԵՐԻ ԿԵԱՆՔԻՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍՄԲԱՏ ՍԱՐԳԻՍԲԵԳԵԱՆԻ.

1001
3630
+52.

2003



ԹԻՖԼԻՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԲԵԼԵՆՔ ՓՈԳՈՑ, 5

1884

Handwritten signature

И

ԽՈՌԻՆ ՅԱՐԿԱՆՔՈՎ

ՆՈՒՐՈՒՄ ԵՄ ԻՄ ՄՈՐ ՄԱՐԹԱՅԻՆ.

ՍԱՆԴԱԼ.

3694



Վ Բ Զ Ա Պ

ՊԱՏԿԵՐ

I

Երէկ երեկոյեան մեր խաղաղ տան մէջ մէկ մեծ շփոթութիւն գեց Մարկոս էֆէնդին: Հանգուցեալ Հայրս իւր կենդանութեան ժամանակ Մարկոս էֆէնդուց վերցրել էր տասն և հինգ բուբլի պարտք, որպէս զի տասն օրից յետոյ վերադարձնի տիրոջը 20 բուբլի: Բայց չգիտեմ թնչպէս է եղել, որ Հայրս չէ կարողացել նշանակած ժամանակին Հասցնել փողը և մինչև անգամ երեք տարի ուշացրել էր: Հօրս կենդանութեան ժամանակ 15 բուբլի պարտքը երեք տարուամ դարձել էր 70 բուբլի, իսկ նրա մահից յետոյ 70 բուբլին դարձել էր 120 իր տոկոսներով: Ես բոլորովին չեմ կարողանում Հասկանալ, թէ և խելքիս շատ եմ գոռ տվել, թէ թնչպէս 15 բուբլի դարձաւ 120 իր տոկոսներով: Մէկ մըտքովս անցնում է մի մեղաւոր միտք, մեղայ քեզ Տէր Աստուած, թէ Մարկոս էֆէնդին տոկոսները և պարտքը

կրկնապատկում է, բայց էֆէնդուց այդ բանը ես չեմ համարձակվում սպասել: Աստուած նրան բարին տալ: Այժմ նա պահանջում է: Ի՞նչ պէտք է անենք, պէտք է վճարենք: Բայց ռոտեղից: Այս հարցը վրա մտածելով ուղղեցի քայլերս դէպի դրացի գիւղի դաշտը, առանց խմանալու, թէ ռոտեղ եմ գնում և ի՞նչու համար: Ինձանից շատ հեռու՝ տեսայ, որ նոյն գիւղացի Կօշտօնց Զիօն, գլուխը կոր, շատ տրտում, մոլորուած շրջապայում էր դաշտերում:

— Ի՞նչու ես այդպէս տրտում, Զիօ եղբայր, ի՞նչ է պատահել քեզ, հարցրի ես մօտենալով նրան:

— Է՛հ, էլ մի հարցնի, Յարօ ջան, տունս քանդվեց: Իր սրտի խորքերից դուրս թողեց նա կսկծալի «ախ»ը:

— Աստուած քո տունը ոչ քանդէ, Զիօ ջան, ի՞նչու ես այդպէս ասում:

— Ի՞նչպէս չասեմ, Յարօ, երբ տունս տեղս մալս և գութանս մի քանի կտոր փախաներու տեղ գնաց, երբ հիմն ՚ի վեր աւերեց տունս, գրկեց հացից և ինձ բոլորովին աղքատացրեց մի կտոր արխալուղացուն: Ես մի քանի տարի առաջ վերցրի վաճառականից մի քանի կտոր շոր և խնդրեցի, որ դրա փոխարէն վերցնի ցորեն, դարի, պանիր կամ գոնէ իւղ: Զէ, չեմ ուզում այդ բաները, տուր ինձ փող պնդում էր վաճառականը: — Ես, ախր, փող չունիմ, էֆէնդեմ, ռոտեղից տամ, ասում էի

նրան, վերջը նա օձի լեզու բանեցնե.ով, թէ ես քեզ հաւատում եմ, թէ դու կ'աշխատես շուտ տալ փողը, որովհետեւ քեզ է դա, ինձ համաձայնեցրեց և ես այս կոտորած ձեռքովս վերցրի և այս կոտորած ձեռքովս թշուառութիւն ստացայ: Այդ պարտքը մի քանի տարիներեց չետոյ քառապատկեց և դրա փոխարէն վերցրին իմ տունը, տեղը, մալս և գութանս: Ահա այսպէս թշուառացայ ես: Աստուած, ոչնչացրու ինձ, ինչպէս ես ոչնչացրի իմ ճնողներին և որդիներին կեանքը, աղքատացրի նրանց: Ասաց խեղճ Զիօն և մի կսկծալի, յուսահատ հառաչանք արձակեց իր սրտից: Իսկ դրա հառաչանքը իմ թոքերս տակն ու վրա արեց, այրեց սիրտս և երկու դժբաղտներին աչքերից քամեց աղի արտասուք:

— Նոյն վիճակը և ինձ է սպասում, մտածեցի ես և դառնալով դէպի թշուառ Զիօն աշխատեցի նրան մխլթարել, բացեալ առաձեռնեցի ոչինչ չը հասկացաւ, շուարվել էր խեղճը: Նրա յուսահատ աչքերում կարելի էր կարդալ, որ մահուան վրա էր մտածում խեղճը:

— Բարեւ մնա, եղբայր Յարօ, ասաց նա և բոլորովին թուլացած հեռացաւ ինձանից դանդաղ և անհաստատ քայլերով:

Նրա հեռանալուց չետոյ ես շատ մտածեցի նրա և իմ դրութեան վրա: Նա ունէր պարտք և ծախեցին տունը, տեղը և անասունները, ունիմ պարտք՝ կը ծախեն տունս, տեղս և սիրուն գոմշուկներս և ես կաղքա-

տանամ: Հետ է ասել «կ'աղքատանամ», բայց ո՞վ կարող է երեակայել ինչէ՛ աղքատութիւնը: Անցնում է աղքատը, նայում են նրա վրա մի հարուստ և մի չքաւոր մարդ: Չքաւորն սրտից արիւն է կաթում և տեսնելով աղքատին արտասուքն աչքերին ասում է «ես քո դուրթիւնը հասկանում եմ», իսկ հարուստն ասում է «այդպէս ես ծնվել, այդպէս էլ կեցիմաս, թէև օգնեն քեզ»:

Անցնում է ժամանակ: Թուրքը այրում է հարուստի խանութը, վաշխառուն ծախում է նրա տունը: Երբեմն հարուստ, այժմ չքաւոր մեկնում է ձեռքը օգնութեան: Ասում են նրան. «Այդպէս ես ծնվել՝ այդպէս էլ կեցիմաս, թէև օգնեն քեզ»: Ուրեմն ո՞վ կարող է ասել «հարուստ եմ չեմ աղքատանալու կամ սպանվելու, աղքատ եմ չեմ սովամահ լինելու»: Այս է տաճկաց գլխաւոր կառավարութիւնը:

II

Այդ օրից երկու շաբաթ յետոյ մէկ լուսնեակ գիշեր, շատ ուշ, տանս դուռը բաղխում են: Բանում եմ դուռը՝ տեսնեմ Ձկօն. թշերն վրա կարմիր վարդերն տեղ մեռելային դեղնութիւն, նրա երբեմն փայլուն աչքերը՝ այժմ խոր ընկած և մարած էին, ճակատը, երեսը ծերունու կնճիւռներ պատած: Ձկօն այդ խղճալի

տեսքից սիրտս ցաւեց երկու կտոր եղաւ, առաջին բուպէներին լեզուս պապանձվեց, յետոյ նրա ձեռքը բռնելով գնացինք խոտի դէզի մօտ: Իսկ լուսինը շքեղութեամբ զարդարված անտարբեր նայում էր մեզ վրա: Ի՛հ, նայիր, ոչինչ, Աստուած բաւքն մի օր մեզ էլ կ'ողորմայ: Եւ դառնալով դէպի Ձկօն հրաւիրեցի նրան նստել: Նա չը նստեց, այլ ոտքի վրա կանգնած, վիզը խղճալի մէկ կողմը ծռած և ձեռքերը ծոցում՝ նայում էր ինձ: Երևում էր, որ մի բան էր ուզում ասել խեղճը և չէր կարողանում:

— Ձկօ ջան, ի՛նչ ես այդպէս յուսահատվել, Աստուած ողորմած է:

Նայիր այն թռչնիկին ծառի տերեւների տակ վրտանդներից ի՛նչպէս է ապաստանվել: Դու կարծում ես Աստուած նրա վրա չէ հսկում: Զէ, Աստուած հսկում է, ապա թող մէկ գիշատիչ թռչուն կամ մի չար մանուկ կարող էր այժմ դրա կեանքին վերջ տալ: Մի յուսահատվիր: Աստուած մեզ վրա էլ է հսկում:

— Այս խօսքերիս Ձկօն ոչինչ չը պատասխանեց, այլ յանկարծ յարձակվեց թռչնի վրա, բռնեց նրան և նրան փետրելուց յետոյ իմ առաջ վայր գցեց:

— Ի՛նչ կարող է անել այժմ այս թռչունը, վերդովված աղաղակեց Ձկօն, այսպէս փետրում են մեզ մեր անհոգի վաշխառուները, պարտքը քառապատիկ սուկոսներով բարդելով:

— Զկօ, հոգիս, այդ ուղիդ է, անդեցի ես նրա ցա-
ւած սրտի արտայայտութեանը, իրաւացի զանգատը
սկսած շատ տարիներ առաջ եղել է,

— Այդ այդպէս է, Յարօ:

— Այս խօսքերը ասելուց յետոյ լռեց Զկօն և տի-
րեց ընդհանուր լռութիւն երկար ժամանակ: Վերջը նա
ոտքի կանգնելով ասաց.

— Ես չեմ եկել քեզ մօտ, Յարօ եղբայր, դարաւոր
զանգատը կրկնելու, այլ ես եկել եմ քեզ ասելու, որ
գնանք միասին:

— Ո՛ւր, շտապեցի ես իմանալ վերջի խօսքը, որ
նա չը կարողացաւ արտասանել ծանր վշտի տակից:

— Ո՛ւր, Տիգրիս, մշակութեան:

Զկօյի վճռական պատասխանը ինձ սարսափի մէջ
գցեց:

Մէկ ակնթարթում սաստկացաւ սարսափս յիշելով
Լուսնթագիցս բաժանվելու ըոպէն, յիշելով իմ սիրուն
հայրենիքը, մեր լեռները, դաշտերը, վճիտ աղբիւրները,
անասուններս և իմ սիրելի դոմշուկները: Ես ամենևին
չէի կարող երևակայել, որ կը լինի այնպիսի անողորմ
ժամանակ, անհոգի ըոպէ, որ անթարար կը բաժանէ
ինձ իմ հոգու մասնիկներէցը, իմ Լուսնթագիցը, իմ հայ-
րենիքիցը:

Ի՞նչու չես խօսում, Յարօ, դու սպասում ես այն-
քան, որ քո պարտաւէրդ էլ քեզ թալանի, զրկի հո-

ղեցդ և գոմշուկներէցդ, յետոյ գնաս մշակութեան, փող
հաւաքես, որ տունդ, տեղդ յետ առնես: Դու կարդա-
ցած մարդ ես և այդ չես հասկանում: Գնանք, գալիս
ես Յարօ: Լռում ես, դէհ, մնաս....

— Գնանք, ակամայ դուրս թռաւ բերանիցս ան-
խուսափելի պատասխանը:

III

Զկօյին օրհասական պատասխան տուած օրուայ
միւս առաւօտը շատ կանուխ դուրս եկայ դէպի աղ-
բիւրը, ուր ամեն օր գնում էր իմ Լուսնթագը ջուր բե-
րելու: Այն ամենօրեայ քաղցր տեսութիւնը, անուշ խօ-
սակցութիւնը և դրկախառնութիւնը չը պէտք է լինէին
այսօր: Նա առաջի անգամները ամաչում էր, կարմրում
էր և վախենում էր տեսնվել ինձ հետ, բայց յետոյ ա-
մեն առաւօտ աղբիւրից սափորը լցնելուց յետոյ ճանա-
պարհից քիչ հեռու ծառի տակ սպասում էր ինձ սիրա-
լից ժպտը երեսին, ուրախ և գրկաբաց: Նոյն ուրախու-
թեամբ ընկնում էի ես նրա գրկը, համբուրում էի եր-
կիւղածօրէն և անուշութեամբ նրա լուսաթաթախ ձեռ-
քերը: Նրա ձեռքերը ձեռքերումս սեղմած նայում էի,
աւելի խորը նայում էի նրա հրեշտակային աչքերի խո-
րութեան մէջ և չէի կշտանում: Զէի կշտանայ, եթէ
ամբողջ օր նայէի նրա սիրուն դէմքին, նրա հրաշալի

աչքերը մէջ, չէի կշտանայ այն անուշութեամբ, որ նա բուրում էր: Օ՛հ, այնքան անուշ էին այն ըոպէները: Բայց այսօր..... սիրտս տրոփում է, արեւնս սառչում է և վախենում եմ: Վախենում եմ կորցնել նրան, վախենում եմ, որ դուրս կը թռչի, կը կորչի իմ հոգին, իմ Լուսնթագը, իմ կեանքի ամենանշանաւոր մասը:

Ես երեակիսում եմ, ո՛հ, որքան սարսափելի է, երեակիսում եմ, որ Լուսնթագիս քրդերը բռնեցին, նրա անարատ մարմնին ձեռնամերձ եղան, կապեցին նրա ձեռքերը, ոտքերը և անթաքար ձիու վրա դրին: Երեակիսում եմ, որ նրա յուսահատ աչքերը օգնութիւն են փնտռում իր շրջակայքում, բոլոր թոքերից ճիշ է արձակում նա օգնութիւն է խնդրում, բայց ապերախտ Յարօն Տփիխում սրբան հանգիստ է: Ո՛հ, ո՛չ, ես Տփիխում կ'ըմանամ Լուսնթագիս տանջանքը, կը թըռչեմ այնտեղից Մուշ, կը յարձակվեմ քրդի վրա, կը խրեմ սուրս նրա կուրծքը, բայց արդէն ուշ է, Լուսնթագը լեռներումն է, գազան քրդերի օրաներում: Օ՛հ, վայ իմ գլխին, ես կորած եմ, ես այլ ևս չեմ կարող ապրել: Լուսնթագ, հոգիս, եկ ինձ մօտ, Լուսնթագ ինձ մի թողնիր, ես մեռնում եմ: Բայց նա չի լսում քրդերի լեռներումն է:—Նոր ես բորբոքած գոչում էի Լուսնթագիս, ահա նա սափորը ուսին շտապում է ինձ մօտ: Այս օր այլևս ինձ չէին գրաւում նրա վարդապոյն թշերը, նրա կայծակնահար աչքերը, ես անհանգիստ էի, որ

պէտք է բաժանվէի նրանից, կորցնէի նրան, զրկվէի նրանից:

—Այս օր ես ուշացայ քիչ, Յարօ ջան, կովերը շուտ պէտք է կթէի:

—Գու չ'ուշացար, ես դժբախտս շտապեցի քեզ տեսնել:

—Ի՞նչու ես այդպէս խօսում, Յարօ, ի՞նչ է պատահել, ասա:

—Ի՞նչ է պատահել, այն, որ ես կորած եմ, ես գնում եմ.....

—Ո՛ւր, ի՞նչու, ասա շուտ, սիրտս պատռվում է:

—Գնում եմ Տփիխի մշակութեան:...

—Մշակութեան,—ճշաց խեղճը և ընկաւ գերկս խեղովելով արտասուքից, և ես լաց եղայ, շատ լաց եղանք: Վերջը.... վերջը, ո՛հ, ինչ դժուար է ասել, թէ որքան մենք այն օրը ջարդվեցինք, ծեծեցինք գլուխներս և արտասուեցինք, վերջը մենք արտասուալից աչքերով հեռացանք միմեանցից: Նա գիտէր, որ ես պարտքեր ունիմ, նրա հայրն էլ ունէր, որի պատճառով գնացել էր Տփիխի և այնտեղ մեռել: Ես միթիթաբեցի Լուսնթագիս ասելով, որ ինքը շատ չը տրտմի, որ շուտ կը վերադառնամ շատ փողերով և որ այն ժամանակ աւելի բաղտաւոր կը լինինք:

Այս օրին հաւաքվեցինք տասնհինգի չափ երիտասարդներ և երեք ծերուկներ որոնցից մէկը, Մէհրաբը

45 տարեկան գնում էր Տիխիս իր կորցրած կնոջը գրտնելու: Մենք վերցրինք ուտելիքների պաշար՝ հաց, պանիր, քիչ էլ իւղ և մանանայ:

Ընկերներս համբուրվելով, լաց լինելով իրանց ծնողներին, որդիներին և ամուսիններին հետ ճանապարհ ընկան, իսկ ես բաւական համբուրվելով ծնողներին, լաց լինելուց յետոյ աչքերս դարձրի դէպի Լուսնթագենց տունը վերջին ողջոյնս տալու նրանց տանը, բայց տան տանիքի վրա տեսայ ողորմելի, խեղճ Լուսնթագիս, որ թաշկինակը աչքերին տարած յուսահատ արտասուում էր: Դրա դրութիւնը տեսնելով սիրտս կտոր կտոր եղաւ և ես վշտացած թաշկինակս գլխիս բարձր շարժելով մնաս բարե մըմնջացի:

IV

Այսպէս հեռացանք մենք մեր սիրուն հայրենիքից և մեր սիրելիներէից: Արեւը վերեւից մեզ սաստիկ այրում էր, հոգնութիւնից ոտքերս հագիւ էինք շարժում, քրտնքի թացութեան մէջ մենք ողողվում էինք, բայց և այնպէս մեր մտքերից չէին հեռանում հայրենիքի բարեքները, չէինք կարող անվրդով, առանց հառաչանքների լիշեւ մեր սիրելիների վերջին խօսքերը: Օ՛հ, որքան դժուար է հայրենական տան գուարճութիւններ

րից հեռանալ: Մի քանի գիւղեր յետեւներս թողնելով մենք շարունակեցինք ճանապարհը մինչև մէկ վճիտ, սառը աղբւրի, նստեցինք այնտեղ, հագեցրինք ծառաներս և ամեն մէկը մեզանից հանելով իր պարկից պանիր և հաց՝ հանդարտ նախաճաշեցինք: Այսպէս մենք շատ և երկար օրեր ճանապարհորդեցինք, գիշերելով երբեմն հայ հիւրնկալ գիւղերում, որտեղ մեզ ընդունում էին շատ լաւ, ինչպէս Աստուծոյ հիւրերին. երբեմն բայօդեայ դաշտերում ծառերի տակին: Այն նեղութիւնները, որ մենք կրեցինք, կարող է հասկանալ միայն նա, որ տասը քսան օր ոտքով ճանապարհորդութիւն է կատարում արևի սաստիկ տոթին. երբեմն սարսափելի անձրևներին, միևնոյն ժամանակ երկիւղով, որ մի գուցէ քաղցած քուրդերը նրա կեանքին ձեռնամուխ լինեն:

Վերջապէս՝ հազարաւոր այսպիսի ծանր նեղութիւններից յետոյ հասանք Տիխիս: Քաղաքի երկհարկանի, եռհարկանի տները շքեղութիւնը, հարստութիւնը և պայծառութիւնը ինձ ապշեցնում էին: Եւ ես մտածում էի, շատ էի մտածում, թէ ի՞նչպէս, ի՞նչ գորութեան շնորհով Աստուծոյ ստեղծած մարդը մի տեղ ահագին, գեղեցիկ և ամուր տներում հրճվում է, խնդում է և աշխարհիս վայելչութիւնները համարձակ վայելում է, իսկ մի ուրիշ տեղ Աստուծոյ ստեղծած մարդը մութ, ծխոտ և կեղտոտ խրճիթում հեծում է, ճնշվում է և արտա-

սուքով է անցկացնում իր բազմաշխատ միւսնոյն ժամանակ աղքատ կեանքի տխուր օրերը, թէ լինչպէս մի տեղ գեղեցկասուն օրիորդը, կինը շքեղութեամբ զարդարւած փառահեղ տներէ պատշգամբներէ վրա հարարտ, հպարտ ճեմում է ցոյց տալով իր գեղեցկութիւնը, իսկ մի ուրիշ տեղ կինը իրան անիծումէ գեղեցիկ ծնվելու համար, որովհետեւ գեղեցկութիւնը մի տեղ պարգև է, մի ուրիշ տեղ պատուհաս, թէ լինչու մի տեղ հարուստ հագնւած մարդը մեծ յարգանք ունի, թէ և ներքուստ աւագակ լինի, միւսնոյն տեղը աղքատ, բայց արդար աշխատանքով հագնւած մարդը միայն արհամարհանք, ծաղր և հալածանք ունի մարդիկներէ կողմից:

Շատ կարելի է այդ փառահեղ տներում, փառահեղ կնիկներէ մէջ, փառահեղ հագուստներէ տակ դէ է նստած, կրծում է նրանց, հրում է նրանց դէպի անգործունեութիւն, դէպի խաբեբայութիւն, խարդախութիւն, գողութիւն և դէպի անտարբերութիւն իրանցից չքաւորները (ապա թէ ոչ և այս պատճառով ստիպւած են նրանք այդ դէպ ծածկելու դուրեկան, փայլուն և զօրաւոր արտաքուստի տակ: Շատ կարելի է ներքուստ էլ լաւ են, բարի են, ողորմած են: Այս մտածմունքներէ մէջ խորասուզւած ամենաւին մոռացայ, որ մենակ չեմ, ու ընկերներս հետևում են ինձ:

Նրբ հասանք Ալիւրի մէջգանին ես դարձայ ընկերներս հետևեալ խօսքերով.—

— Տղերք, մենք այստեղ պէտք է բաժանվենք, թէ և ցաւում է սիրտս, որ ստիպուած ենք հեռանալ միմեանցից: Պէտք է բաժանվենք, որովհետեւ մեզ բոլորիս մէկ տեղ չեն տայ գիշերելու, այստեղ, ինչպէս ասում էր հանգուցեալ հայրս, մեր գիւղերն նման չեն հիւրասիրում, այստեղ բոլորը փողով է: Շատ լաւ կը լինի, որ մեզ ամեն մէկիս յաջողի գտնել քրիստոնեայ, ողորմած մարդիկ նրանց մօտ գիշերելու մինչև մեր մի գործ գտնելը:

— Ապա, մենք լինչ կարող ենք անել այս ծով քաղաքում, Յարօ եղբայր, մենք բոլորովին տգէտ ենք, անփորձ ենք:

— Յուսահատութեամբ գոչեցին ամեն կողմից խեղճ պանդուխտները, կարծելով, որ մենք աւելի խելօք ենք և նոյն յուսահատութեան մէջ չենք ընկած նոյն հարցի պատճառով:

— Տղերք, ձեր հոգուն մատաղ, մի վախէք, մենք էլ այնպէս պէտք է անենք, ինչպէս դուք, մենք էլ ախր առաջի անգամն ենք գալի Տփլիս, ինչպէս դուք: Յոյսներդ դրէք Աստուծոյ և ձեր խելքի վրա: Դէհ, մնաք բարեւ սիրելիք: Աշխատենք շուտ շուտ տեսնվել այստեղ:

— Այս ասելուց յետոյ ես և Ձիօն բաժանվեցինք միւսներէր, աւելիո՞ծ ծովի անդունդը մտնելու: Թէ ո՞վ որչ կը դուրս գայ՝ այդ Աստուած գիտէ:





Օրը մթնելու վրա էր: Ես և Զիօն մեր և մեր ընկերները անմխիթար դուրթեան վրա խօսելով կանգ առանք մի հոյակապ տան դռները առաջ:

— Զիօ, արեւ այս տան աղայից խնդրենք գիշերելու տեղ:

— Մտնենք, ասաց նա:

Մտանք գաւիթը, նայեցինք մեր շուրջը՝ ոչ ոք չը կար: Զախ կողմը երևում էր մի հոյակապ սանդուխք, որը տանում էր դէպի սենեակների մուտքը: Մենք անհամարձակ քայլերով բարձրացանք այդ սանդուխքով դէպի դուռը: Հագիւ բարձրացել էինք սանդուխքի հինգերորդ աստիճանը, դուռը բացվեց, երևաց մի բարձրահասակ երիտասարդ, գոռոզ և չար դէմքով, խենչալը արծաթէ գոտիկից կախած և երկայն սև կապան հագին: Նա մեզ տեսնելուն պէս մի արհամարհական հայացք գցեց մեզ վրա և նրա չար դէմքը դիւակաւ արտայայտութիւն ստացաւ: Առանց հարցնելու, թէ մենք ի՞նչու համար էինք եկել, առաջին խօսքը մեզ անձանութ լեզուով, կարծես, հայհոյանք եղաւ, որովհետև խօսելիս նա ոտքերը գետնին էր խփում և ձեռներով գաւիթի դուռն էր ցոյց տալի: Մեր բաղդից այդ վայրկենին նոյն դռնում երևաց մի շատ գեղեցիկ, մեծահասակ և հաստիկ կին: Նրա հարուստ հագուստից կարելի էր եզրակացնել, որ

նա տան տիկինն էր, մանաւանդ վերջինս հրամայեց երիտասարդին վերցնել գաւիթում թափած պարանները և յետոյ դառնալով դէպի մեզ շինծու ժպիտով հարցրեց քաղցրութեամբ, թէ մենք ի՞նչ ենք կամենում: Շինծու ասում եմ, որովհետև նրա գոռոզ և հպարտ դէմքին բոլորովին չէր սագում քաղցր ժպիտը: Տիկնոջ հարցին մենք չը կարողացանք առաջին անգամից պատասխանել, որովհետև խենչալաւոր երիտասարդի գոռում գոչիւնից մեր սրտերում առաջացած երկիւղը չը կարողացանք խկոյն հեռացնել տիկնոջ քաղցր ժպիտի առաջ: Տիկինը անհամբերութեամբ կրկնեց հարցը և պատրաստվում էր հեռանալ: Այդ ժամանակ ես համարձակութիւնս հաւաքեցի և խղճալի կերպով խնդրեցի, որ նրանք մեզ, նորեկներին, մի տեղ տան գիշերելու: Այս խօսքերիս վրա տիկնոջ դէմքը ուրախութեան պէս մի բան արտայայտեց և դառնալով դէպի մեզ ասաց, որ մեծ ուրախութեամբ կը տայ ձիւաների գոմը, որտեղ ազատ շատ տեղ կայ և ցաւօք սրտի յատնեց, որ ուրիշ տեղ չունի: Մենք խնդրեցինք մեզ ցոյց տալ գոմը, Տիկինը ինքը իջաւ գաւիթը և մենք երեքս մտանք մեր ապագայ պալատը: Գոմի մէջ, աջ կողմը, կապած էին երկու գեղեցիկ, առողջ, սև, ինչպէս ածուխ, ձիւաներ և ծուլութեամբ ծեղ ծեղ քաշում էին ախոռում առատութեամբ կիտած մետաքսանման խոտից: Զախ կողմը երկու տակառ լի սև պատուական դարիով, դրա մօտ կիտած նոյն խոտից:

Բայց ամենագարմանալին այն էր, որ այս հարստութեան զուգնթաց տիրում էր սարսափելի գարշահոտութիւն ձիւնների աղպը, որ առատութեամբ դեղձած էր յատակից մինչև առաստաղը։ Սրա պատճառը երբ հարցրի տիկնոջից նա մաղձալից խօսքերով յանդիմանեց ախորապետի անհոգութիւնը, որի պատճառով արտաքսված էր վերջինս։ Յետոյ ողորմած տիկինը տուեց մեզ տեղ քնելու՝ ախորապետի ազատ տախտը, միևնոյն ժամանակ ասելով կարեկցութեամբ, որ վնասակար է մեր առողջութեան համար ձիւնների աղպը, որ հարկաւոր է բոլորը դուրս թափել։ Յետոյ նա յանձնեց մեզ ձիւնների պահպանութիւնը... Նրանց տակը մաքրելը, խոտ, գարի տալը, նրանց ջրելը, վերջապէս նրանց թիմար քսելը։ Այս յանձնարարութիւնները վերջացնելուց յետոյ աւելացրեց նա ողորմածութեամբ, որ մեր աղքատ դուրսութեան վրա խղճալով տան վարձ ոչինչ չի կամենում վերցնել, թէև կախեն էլ իրան։ Տիկինը հեռացաւ։ Մնացինք ախոռում ես և Զիօն։ Նրբ քիչ մթնեց, ես դիմեցի տիկնոջը, որ նա մեզ մօմ տայ և եթէ ունին մի քանի հին գորգեր քնելիս տակներս և վրաներս գցելու համար։ Տիկինը, երբ այս խնդիրս լսեց, բաւականին լըթվացրեց իր գեղեցիկ դէմքը և անբաւական ձայնով ասեց. հետևեայր։

— Ես զարմանում եմ հայերի ազահութեան վրա, բաւական չէ, որ նրանց ձրի տուն եմ տալի համարձակ-

վում են մօմ և անկողին խնդրել և չը գիտեմ յետոյ էլ լինէ կը խնդրէք։ Տօ, որ ուրիշ տեղ գնայիք փող չը պէտք է տայիք ձեր բնակվելու համար։ Ես ձեզանից փող չեմ ուզում, բնակվեցէք ձեզ համար հանգիստ, մեզ էլ լծողէք հանգիստ, մենք խօ պարտական չենք ձեզ համարի տուն, համ մօմ և անկողին տալ և վերջը սատանան գիտէ կը ստիպէք ձեզ ուտեցնել և հագցնել։

— Տիկին, աչքերիդ ղուրբան, մենք ձեր աղքատն ենք, ձեր գլխով պտոյտ դանք, ձեր ցաւը տանենք, լինէ էք նեղանում, մենք առանց մօմ էլ, առանց անկողին էլ կ'ապրենք, դուք մի բարկանաք, մի վրդովվիք։

Ես այս խօսքերով տանտիկնոջը հանգստացնելուց յետոյ վերադարձայ Զիօյի մօտ բոլորովին դատարկ ձեռքով։

— Ոչինչ չը տուին, ասեցի ես նրան։

Նա ոչինչ չը պատասխանեց, միայն ամբողջ լծփերից հառաչանք արձակեց։ Այս մարդը շատ էր մտածում, անհանգիստ էր բոլոր ժամանակ և ոչինչ չէր խօսում։ Ես մտածում էի, որ այս մարդուն, վիշտը բոլորովին ոչնչացրել էր և ես իմ վիշտը մոռանալով աշխատում էի նրան ծիծաղացնել, տիկնոջ նման մանգալ, տիկնոջ նման ծանր շնչել, ինչպէս նա շնչում էր ահագին ճարպի տակից, երգում էի նրա համար մեր սիրելի երգերից, բայց բոլորն ի դուր, նրան ոչինչ չէր գրաւում, չէր ծիծաղում ամենեւին, միայն ժպտում էր, այն էլ այնպիսի

Ժպիտով, որ սարսեցնում էր ինձ: Այսպէս էր Ժպտում իմ հայրը, երբ մահուան անկողնում ես աշխատում էի նրան մխիթարել: Այս Ժպիտը յաւիտենականի մնաս բարևի Ժպիտն էր: Զի՞տն բարձրահասակ, գեղեցկադէմ երեսուն տարեկան երիտասարդ էր, բայց ըստ երևութիւն դէմքի խորը կնճիւռներով աւելի քան քառասուն տարեկան էր:

Նա տասնչորս տարեկան հասակում, երբ իր հայրը, գեւղի ամենահարուստ մարդը, պարտքի մէջ ընկաւ, գնաց Պօլսոյ իր չքաւոր ծնողի պարտքը վճարելու պատճառով: Հինգ տարի Պօլսոյ ամենածանր աշխատանքներ կատարելով կարողացաւ իր հօր պարտքը վճարել: Բայց անցաւ Ժամանակ իր հայրը և ազգականները կըրկին աղքատութեան մէջ ընկան, կըկին պարտքեր ունեցան տէրութեան տալու: Նւ նա ստիպւած մինչև երեսուն տարեկան հասակը օտար աշխարհներում, դառը պանդխտութեան մէջ, հեռու սրտի սիրելիներէց քրտինք էր Թափում, չարչարում էր, հիւանդանում էր, առողջանում էր կըկին աշխատում էր, կըկին ազատում էր հօրը և ազգականներին պարտքերէց, աղքատութիւնէց: Զի՞տն այդտեղ ծանր մշակութեան և ուրիշ նեղութիւնների Ժամանակ, երբ մտածում էր Տաճկաստանի հայ մշակի մշտական մշակութեան մասին և այն աղքատութեան մասին, որ ճնշում էր նրան Թէ Պօլսոյ և Թէ Տաճկաստանի գեւղերում նա անմխիթար կարծիք

էր կազմել աղքատութեան քանդող և սարսափելի ուժի մասին: Նա ասում էր «ով մի անգամ ընկաւ աղքատութեան ճանկերը՝ նա այլ ևս յոյս չունենայ ազատվելու նրանից. նա յաւիտեան նրա ճանկերում, նրա ատամների տակ կը լինի և այնտեղ կը ջախջախվի և կուզ կ'երթայ»: Նա աղքատութեանը վազը, առիւծ, գայլ էր անուանում: Նա երազումն անգամ հանգիստ չունէր աղքատութեան երկիւղից: Ներքեմն տեսնում էր երազում, որ ծովից դուրս է գալի մի ահագին ձուկը և կլանում է նրան, կամ վազերները, առիւծները հաւաքվում էին նրա շուրջը և ծվիկ ծվիկ են անում նրան, կամ երկինքը քանդվում է և նրան տակն է անում և ուրիշ սրանց նման երազներ: Միւս օրը նա գնում էր գրբացի կամ գարի գցողի կամ ուրիշ փալ բացանողների մօտ, որոնք ասում էին նրան, Թէ նա շատ կ'աղքատանայ և աղքատութիւնը նրան կը սպանէ: Նա ասում էր, որ երեսնայութեան Ժամանակ սրաւանները հեքիաթներ էին պատմում հազար գլխանի խօսող կենդանիների մասին՝ նա շատ էր վախենում նրանցից: Իսկ նոյն խօսող հազար գլխանի կենդանիները այժմ հանգիստ չէին տալի նրան երազներում:

Այսպէս նա Պօլսոյ և Տաճկաստանի ուրիշ քաղաքներում իր մատաղ հասակը անց էր կացրել ծանր վշտերի և աշխատութիւնների մէջ: Իսկ այժմ, երբ խեղճը Պօլսից վերադառնալով միայն երկու, երեք ամիս

էր վայելել հայրենական տան ուրախութիւնները, իսկ այժմ իր սեպհական պարտքի համար էր եկել մշակութեան: Այժմ թուլացած, մաշված երկարամեայ ծանր և տխուր աշխատութիւններից՝ յուսահատված էր:

Ասում էր «կրկին կը հաւաքեմ փող, կը տամ պարտքերս, կ'ազատվեմ աղքատութիւնից, բայց միայն մի կարճ ժամանակ»: Տէրունական հարկը, որ փողով վերցնվում և որ մեր արդիւնաբերութիւնները չը ծախվելու պատճառով մենք փողով չենք կարող տալ, կրկին կը ծանրանայ մեզ վրայ, պարտք կը յառաջանայ, մենք կրկին աղքատ ենք, կրկին սէտք է գանք մշակութեան: Մինչև երբ»: Նա յուսահատված էր և անփախչելի էր յուսահատութիւնը:

Այդ գիշեր սաստիկ անձրև էր դուրսը, այս պատճառով մենք մնացինք ներսը: Լուռ էինք, և ծանր շնչում էինք աղբի գարշահոտութիւնը, այն անուշ և քաղցր օգերից յետոյ, որ մեր հայրենիքումն են լինում: Մենք քնած չէինք, բայց լուռ էինք:

— Յարօ, յանկարծ գոչեց ինձ ընկերս:

— Ի՞նչ է, Զիօ:

— Գրքումն ի՞նչ է գրած, մարդն է բաղդաւոր, թէ անասունը:

— Գրքումը գրած է, որ մարդն է բաղդաւոր, որովհետեւ բոլոր շնչաւորների գարդն է, պսակն է և տէրն է:

— Եւ անշունչներ:

— Այո, ասեցի ես և լուռութիւն տիրեց:— Ի՞նչու էիր հարցնում Զիօ և ի՞նչու լռեցիր:

— Հարցնում էի, որ գրքերի հեղինակների յիմարութիւնը իմանամ և լռեցի, որ մտքումս հայհոյեմ նրանց:

— Միթէ ուղիղ, չէ, Զիօ, հարցրեցի ես:

— Ոչ թէ ուղիղ, այլ սուտ է: Տեսնում ես այս կենդանիներին, իրքան բաղդաւոր են, գերացել են և այժմ կշտացած պարկած են հանգիստ: Մենք քանի՞ օր է, որ քաղցած ենք:

Իսկ ես ոչինչ չը կարողացայ պատասխանել նրա վրդովված և վշտացած սրտի արտայայտութեանը:

VI

Առաւօտը, ըստ սովորութեան, մենք վաղ դարդեցինք, լուացվեցինք և ջերմ աղօթելուց յետոյ պատրաստվեցինք դուրս գնալ գործ փնտռելու: Այդ ըռպէին դուրս եկաւ խենչալաւոր չար ծառան և մատով նշան անելով հրամայեց մեզ տեղից չը շարժվել և ինքը մտաւ ներս հետը բերելով ողորմած տիկնոջը: Տիկինը դարձաւ մեզ հետեւեալ խօսքերով:

— Տղերք, առաջ թափեցէք այդ աղալը յետոյ գնացէք որտեղ կամենաք:

Հրամանը խիստ էր, մենք հնազանդվեցինք և խնդրեցինք քթոցներ և պարաններ գործը սկսելու:

Համար: Բերեցին մեր խնդրած բաները: Այս խնդրին հեշտ համաձայնեցին, իսկ մոմի և գորգի խնդրին . . . է՛հ, Աստուած իրանց բարին տայ: Սխեցինք լցնել քթոցները: Աղպը թաց էր և ծանր: Մեզ ծառան ցոյց տուեց թափելու տեղը: Հինգ, վեց ճանապարհ տարանք թափեցինք: Բայց եօթերորդ թէ ութերորդ անգամն էր, չեմ չեղում, ոստիկանը բռնեց մեր թևերից և սխեց ուսերէն ինչ որ ասել, մենք չը հասկացանք: Յետոյ նա հայերէն սխեց մեզ հայհոյել, թէ լնչու ենք մենք աղպը գետը թափում: Մենք քիչ ուրախացանք, որ հայ էր ոստիկանը: Բայց դժբաղտաբար ուրախութիւնը լացի, ցաւերի փոխվեց:

Ոստիկանը շվացրեց երեք անգամ, եկան չորս ոստիկաններ, կապեցին մեզ պարաններով Զիօյն և յանձնելով նրան մի վրացի ոստիկանի, հրամայեցին, որ յանցաւորին տանեն պօլիցեայ:

Նա սխեցի լաց լինել, աղաչել, որ թողնեն իմ դժբաղտ և սիրելի ընկորս բայց իզուր Իսկ Զիօն բոլորովին անվրդով և հաստատ քայլերով հետևում էր ոստիկանին և իմ լացիս, յուսահատութեանս նայում էր իր սովորական ժախտով:

Բարեբախտաբար յայտնվեց այդ ժամանակ մի երիտասարդ քողաքացի, ինչ որ ասեց նա ոստիկանին. վերջինս արձակեց Զիօյն կապանքները և ազատ թողեց նրան, բայց պարանները չը տուեց մեզ:

Իսկ Զիօն սարսափելի վճռականութեամբ ստիպում էր ոստիկանին տանել իրան պօլիցեան: Այդ ժամանակ ես սաստիկ բարութեամբ բռնեցի նրա ձեռքը և ուժով տարայ տուն: Մենք գնացինք տիկնոջ մօտ և բոլորը պատմեցինք նրան: Փոխանակ մեզ վրա խղճաւու սխեց նա հայհոյել մեզ անգթաբար: Նա ասում էր.

— Աւագակներ, քաղցած գողեր, պարաններս տաւաք ծախեցիք, բարութեան փոխադէնն էր անգգամներ:

— Տիկին, քո հոգուն մատաղ, ձեր պարանները ոստիկանները խլեցին և մեզ, անտիրականներես, անգթաբար ծեծեցին, մեզ աւագակ մի անուանէք, մենք խեղճ պանդուխտներ ենք, մենք սովոր ենք մեր քրտինքով ուտել հաց, մեզ մահացու մեղք է խաբեբայութեամբ, գողութեամբ ապրել, կերակրվել, ասեցի ես:

— Բաս ո՛ր է պարաններս, թէ դուք արդար մարդիկ էք: Ո՛ր է պարաններս բերէք թէ չէ չը գիտեմ ինչ կը բերեմ ձեր գլխին:

Այս էր պակաս՝ ճանապարհի նեղութիւնը և երկու օրուայ մեր քաղցածութիւնը մի կողմից, այսօրուայ սաստիկ ծեծը, երկիւղը միւս կողմից, տիկնոջ սպառնալի և մաղձալից խօսքերը երրորդ կողմից:

— Տիկին, մենք մեղաւոր չենք, որ ձեր պարանները խլեցին մեզանից, մենք աշխատում էինք չը տալ, բայց նրանք գորով խլեցին:

— Զէ ես չը գիտեմ, խլեցին թէ չը խլեցին ինձ

Համար միևնույն է, բերէք իմ պարանները կամ երեք ըուբլի, բերէք ասում եմ ձեզ, թէ չէ սուրբ Փեթրային և սուրբ Խուրթի զօրքը գիտենայ, որ ձեզ կապած պօլիցիան կը յանձնեմ ինչպէս անգգամ գողերի:

— Լուիս, անգգամ, գոչեց Զիօն, հերիք հայհոյես, քարս... այս քարով գլուխդ կը ճեղքեմ, լուիս անգուլթ... լուիս անարժան մարդ:

Ասաց կատաղած և արագ հեռացաւ նա այդ տնից:

Ես սպասում էի տիկնոջից, որ նա ծառաները կ'ողալէ, կը բռնել տայ Զիօյին և կը կալանաւորէ նրան:

Այս պատճառով ես անշարժ կանգնեցի տեղս սպասելով, որ ծառաներին խանգարեմ Զիօյին բռնելու համար: Բայց տիկնոջ գեղեցիկ դէմքը մեռելային գոյն էր բռնել Զիօյի կատաղած խօսքերից երկիւղից և երկար ժամանակ նա ոչինչ չը կարողացաւ, թէ չը կամեցաւ ասել: Վերջը որոտաց այսպէս.

— Հեռացէք անգգամ ասլերախտներ, հեռացէք, որ այլևս չտեսնեմ ձեր երեսը:

Բայց ես խնդրեցի, որ նա մեզ չ'անիծէ, որ մենք նրա սրահանջած երեք ըուբլին կ'որցրած պարանների փոխարէն մէկ շաբաթից յետոյ կը բերենք: Այս խօսքերի վրա հանդարտվեց փոքր ինչ տիկինը և ինձ գովեց իմ հնազանդութեան համար: Ես դրա գովասանքը և օրհնութիւնը, որ նա անում էր ինձ վրա երեք ըուբ-

լու պատճառով, կիսատ թողի և շտապեցի Զիօյի հետեից՝ վախենալով, որ նա բարկութիւնից և յուսահատութիւնից չը սարսէ իրան կամ մի բան չը բերէ իր գլխին: Այս սպասելի էր նրանից և այն ժամանակ, երբ նա դեռ հայրենիքումն էր հարստութիւնը կ'որցնելուց յետոյ և մանաւանդ այժմ, այսքան տառապանքներից յետոյ աւելի ևս սպասելի էր: Որքան մտքերումս ոյժ կար վազում էի, բայց չը գիտէի, որ կողմ գնայի, որովհետեւ Զիօն չէր երևում: Երբ ես յուսահատված կանգ էի առել երկու ճանապարհի մէջ տեղը և մտածում էի, որ կողմը գնամ, տեսնեմ մէկը ուժգնութեամբ ձգում է թևիցս, նայեցի ո՞վ է, ոստիկանը մատով ցոյց էր տալի մի սատկած շուն: Մարմնովս մեռելային սառնութիւն անցաւ, ոտքերս թուլացան և ես սկսեցի աղիողորմ լաց լինել իմ դժբաղտ Զիօյի վրա, կարծելով, որ ոստիկանը յայտնում էր Զիօյի մահուան մասին սատկած շունը ցոյց տալով: Նա իմ լացի վրա ուշադրութիւն չը դարձրեց, այլ աւելի ուժգին ձգելով թևիցս և ինձ քաշելով տարաւ մինչև դին: Այդ ժամանակ աչքերս մթնեցին և ես ոչինչ չէի տեսնում, միայն մի երեխայի ճոցից ուշքի եկայ և իմացայ վերջինից, որ ոստիկանը հրամայում էր ինձ շունը գետը գցել: Ես հրնազանդվեցի, տարայ գետը և ինչ զարմանք, Զիօն գետի եզրին չոքած աղօթում էր:

VII

Նոյն օրվայ ժամի տասերկուսնէր: Ամարային այ-
րող արեւը ամենին իր խուցը, իր տունը, իր պալատնէն
մտորել, իսկ մենք չունէինք անկիւն անգամ մեր թու-
լացած մարմնին հանգստութիւն տալու: Երեք օրուայ
քաղցածութիւնը մեզ մի տեղ հանգիստ չէր թողնում:
Մենք թափառում էինք տնից տուն աղա ունեցողներին
խնդրելու, որ մեզ տան թափենք մի կտոր հացի հա-
մար, բայց ոչ ոք ոչ մի տան գաւթում չէր երևում այդ
սաստիկ տօթին: Քաղցածութիւնը մեզ տանջում էր:
Զկօն մի բառով անգամ չէր արտայայտում իր տըր-
տունը, նա էլ քաղցած էր:

— Զկօ ջան, ճար չկայ ձեռքս պէտք է մեկնեմ
ողորմութեան:

— Ամաչիւր, մըմնչաց նա դժգոհութեամբ:

Ես լռեցի և աշխատեցի համբերել: Բայց ոչ, ոչ-
ժերս թուլանում եմ, աչքերս շաղվում են: ստամոքսս
սեղմվում է և ցաւում է: Համբերութիւնս սպառում է:
Եւ ես կրկին ասում եմ.

— Մեռնում եմ, Զկօ գնում եմ:

— Գնա ուր որ ուզում ես, ասաց նա խստութեամբ
և լռեց:

Ես շտապով վազեցի հացթուխի մօտ և խնդրեցի:

Իսկ նա պատասխանեց ինձ սառնութեամբ «Գնա»:
Կրկնեցի խնդրս՝ կրկնվեց և նոյն օրհասական և ան-
հոգի «Գնա»ն:

— Եղբայր, հոգիս, աղա փռնչի, մենք նորեկներ
ենք, այստեղ ծանօթ բարեկամ և փող չունինք, եղբր
մեր հրեշտակը, մեր ազատարարը. երրորդ օրն է, որ
մի կտոր հաց չենք դրել բերաններս:

— Տօ, հաստավիզ դատարկապորտ, ես մեղաւոր
եմ, որ դու քաղցած ես, ես սլարտական եմ աշխատան-
քըս քեզ տալու, աշխատիր ու կեր, լինէ էք լըբաբար
երեսներդ դէմանում և միշտ անհանգստացնում մեզ:
Գործ ճարիր՝ գործիր և այնպէս հաց կեր, և ոչ խնդրէ:

— Աղա փռնչի, աբա գործ չենք փնտռում որ չը
կայ: Եթէ գործ լինէր մենք ուրիշներին կը նեղացնէինք
ողորմութիւն խնդրելով:

— Գործ լինչու չը կայ, եղբայրս, դու գործ խընդ-
րեցիր և ես չը տուի. ահա գործ. 20 կոպէկ կը տամ
թափիր այս աղալը:

-- Աչքիս վրա, աղա ջան:

Շատ ուրախացրեց ինձ բարի փռնչու առաջար-
կութիւնը. բայց աւելի ուրախացրեց մի ձայն, որ կան-
չում էր «մշակ, արի այս գինին տար մեր տուն 20 կո-
պէկ կը տամ»:

— Իսկոյն, իսկոյն, աղա ջան, ընկորս կանչեմ, գա-
լիս եմ:

Զիօյին գլինին յանձնեցի տեղ հասցնելու, իսկ աղ-
պը ես վերցրի: Ես վախենում էի նրան երկրորդ անգամ
ուղակել, թէ ոստիկաններին չը պատահելու համար և
թէ գետը նրա դրութեան շատ վտանգաւոր էր: Զիօյին
ասեցի որ փռնչու մօտ կ'սպասեմ. նրա վերադարձին,
իսկ ես մեծ զգուշութեամբ բոլոր աղպը թափեցի ա-
ռանց մի ոստիկանի պատահելու, երեւի արեւը նրանց էլ
էր նեղացրել: Եթէ պատահել էի, այլ ևս չէի վախե-
նայ և չէի վախենում, որովհետեւ քաղցած էի: Ստացայ
կաթնագոյն, կաթնահամ արծաթեայ արասին: Ո՛հ, որ-
քան ուրախացայ, շատ ուրախացայ: Մի կուշտ և բա-
ւականին նայեցի նրա վրա, շատ համբուրեցի նրան,
դրի աչքիս վրա՝ յետոյ կրկին համբուրեցի, դրի ճակա-
տիս վրա, յետոյ կրկին համբուրեցի, շատ և շատ համ-
բուրեցի: Սպասում էի Զիօյին, որ միասին գնէինք և
միասին ուտէինք հացը: Ի՞նչու ուշացաւ նա: Նա էլ կը
բերի կաթնագոյն արասի: Ո՛ւր է իմ արասին, ծոցումս
է, մէկ էլ տեսնեմ: Ո՛հ, ի՞նչ սիրուն է, ի՞նչ սպիտակ է,
ո՛հ, որքան սիրեցի քեզ արասի: Դու շատ զօրաւոր ես:
Դու երկու մարդու կեանք պէտք է ազատես, քեզ պէս,
եթէ շատ լինէին մի ընտանիք, մի գելդ, մի քաղաք կը
փրկէք: Դրուստ ասա, արասի ջան, դուք խօ չէք գոյ
մեզ մօտ, մենք պէտք է գանք ձեզ մօտ, պէտք է եր-
կիրը վարենք, ցանենք, արտը հնձենք, ցորեն ստա-
նանք, ծախենք, յետոյ կը գաք մեզ մօտ, այնպէս չէ

սիրելի արասի: Ո՛հ, ի՞նչ զօրաւոր ես, արասի, հէնց դրա
համար եմ սիրում քեզ:

— Այնքան ուրախացել էի, որ ցնդում էի յիմար,
յիմար:

Իսկ մի տղայ երկար ժամանակ նայում էր ինձ
վրա, ծիծաղում էր, մօտենում և հեռանում էր ինձա-
նից և յետոյ նա այլ ևս չերեաց: Ես կրկին սկսեցի ու-
րախանալ արասիովս և սաստիկ ուրախութիւնեցս նրան
վերեւ էի գցում և բռնում: Յանկարծ այդ վայրկեանին
երեւաց այն տղան, խփեց ձեռքիս, վայր գցեց ա-
բասիս, վերցրեց և փախաւ, ես նրա հետեւից, աղաչե-
լով, բարկանալով, կրկին աղաչելով, կրկին բարկանա-
լով, այսպէս երկար տեղ վազեցինք: Փողոցներում ոչ
ոք չը կար, որ ինձ օգնէր: Ես շարունակում էի վազել
գանձիս հետեւից, բայց ՚ի գուր, յափշտակողը չը կար,
կորաւ, անհետացաւ աւազակը: Յուսահատութիւնից ու-
րախութիւնս տխրութեան փոխւած՝ եկայ նշանակած
տեղը: Սկսեցի հայհոյել փռնչուն, աղպին, արասուն,
յափշտակողին և ինձ: Շատ հայհոյեցի յափշտակողին և
ինձ: Շատ ժամանակ չանցաւ ահա Զիօն եկաւ:

Ներք հաց մի բազլի տակին, մի ձմբուկ
միւս բազլի: Եկաւ նստեց պատի տակին և կան-
չեց ինձ:

— Զիօ ջան, դժբաղդութիւն պատահեց հետի, ա-
բասից զրկուեցի:

— Ի՞նչպէս:

— Այնպէս որ մի շար տղայ ձեռքիցս կորզեց և առաւ գնաց, վազեցի, վազեցի հետեւիցը, բայց չը կարողացայ գողին բռնել:

— Է՛հ, ոչինչ, երեւի նա էլ է քաղցած եղել:

Ասում էր նա այս խօսքերը սառնութեամբ և մի և նոյն ժամանակ դանակով մանրում էր ձմերուկները: Մի սաստիկ հառաչանք արձակեցի սրտիս խորքերից և նստելով սկսեցի ուտել ագահութեամբ: Երբորդ օրն էր քաղցած էինք: Զիօն բացի 20 կոպէկից աշխատել էր և տաս կոպէկ սալից մի պարկ ալիւր ներս տանելու համար: Զիօն բերածը բոլորը կերանք և փոքր ինչ կըլտացանք: Կշտանալուց յետոյ պատի ստուերում փողոցի վրա պարկեցինք և քնեցինք բաւականին երկար ու քաղցր: Մինչև մթնելը մենք ամեն մէկս, 25 կոպէկ էլ կարողացանք ձեռք բերել: Ես բաղանիքից այդ փողի համար երկու անգամ լուացք տարայ, իսկ Զիօն տասն կամ տասնհինգ խանութներ շուրջը եղած ցէխը մաքրեց: Երբ մթնեց մենք այլ ևս չաշխատեցինք տներում խնդրել գելերելու տեղ, վախենալով, որ մի գուցէ նոյնպէս յանդիմանքի և անհանգստութիւնների ենթարկվենք, ինչպէս ողորմած տիկնոջից: Մենք ապաստանվեցինք մի եկեղեցու գաւթում և գերեզմանաքարերի վրա պարկերով քուն մտանք: Զը գիտեմ, որքան ժամանակ էինք քնել, երբ Զիօն յուսահատ և սաստիկ աղաղակը

ինձ արթնացրեց:— Ի՞նչ է, ի՞նչ է պատահել քեզ հետ, Զիօ ջան, ասա հոգիս:

— Սարսափելի երազ տեսայ, ցարօ ջան:

Զիօն իր երազը պատմեց այսպէս. «Մի շատ մեծ դաշտում հաւաքվել էին աշխարհիս ամենայ ամենի, ամենայ ուժեղ դադանները: Մի ահագին գազան, որ մեր տունը չէր մտնի իր մեծութեան պատճառով, երկար քիթը ուժգնութեամբ շարժելով կատաղած վազվզում էր դաշտում, վազը իր ուժեղ պոչը իր կողերին զարկելով ահագին արձագանքներ էր պատճառում բոլոր շրջակայքում, նրա արևնով լի և կայծակնափայլ աչքերը սարսափելի կերպով փայլում էին, իր ուժեղ ոտքերով կատաղած ծեծում և փորում էր գետինը և նրա սաստիկ զարկերից շարժվում էր երկիւրը: Մէկը աւելի ամենի, քան վերև յիշած գազանները, քթի վրա եղած եղջիւրով արմատախիլ էր անում բարկութիւնից շրջակայքում եղած մեծ և հաստ ծառերը: Գայլը սարսափելի կերպով վերև վեր էր թռչում կատաղութիւնից, աղուէսը բարկութիւնից կըծում էր իր երկայն պոչը և ուրիշ բազմաթիւ աւելի ամենի, աւելի կատաղի գազաններ փրփրած շրջում էին մէկ ինչ որ մեծ, աւելի մեծ քան վանքի եկեղեցին, բանի շուրջը:

Ես դողում էի երկիւղեց, բայց և այնպէս սաստիկ ցանկանում էի իմանալ այդ ամենէն գազանները բարկութեան պատճառը, որ այն ահագին, մեծ բանն էր: Բռնեցի փղի կարճ պոչից և սպասեցի այսպէս մինչև նրա մօտենալը այն մեծ բանին. նա շուտ շուտ էր մօտենում նրան: Արագ քայլերով կատաղած յարձակվեց նա նրա վրա, բայց նոյն կատաղութեամբ չետ ցատկեց, իսկ ես այդ ժամանակ մի մեծ կոճղի տակին թափեցվեցի և սկսեցի նայել այն մեծ բանին: Ո՛հ, որքան սարսափելի էր նա: Նա մարդ չէր, նա գազան չէր, ծառ չէր, վերջապէս և ոչ սար: Շատ մեծ երկաթեայ վանդակում պարկած էր մի ամենի, սարսափելի կենդանի: Նա այնքան մեծ էր, որ համեմատել մի բանի հետ ես դժուարանում եմ: Աւելի քան հարիւր գլուխներ ունէր նա և նրա նոյնքան բերաններեց դուրս էր փռնթփռում հուր, բոց հաղարաւոր կրակի լեզուներով: Նրա բիւրաւոր աչքերը այն փայլն ունէին, ինչ փայլ ունենում են աստղերը սարսափելի ժամանակ: Ո՛հ, սարսափելի կենդանի էր, եթէ ուրիշ բան չէր: Նրա մարմինը ծածկած էր հրալից լեզուներով, նրա երկայն պոչը, որի ծայրը ես չը կարողացայ տեսնել, մի ահագին, երկայն բոց էր: Ահա նա շարժվեց, տաքութիւնեց կարմրացած վանդակի երկաթները ճոճուացին, կոտորավեցին: Բայց ամենի առիւծը, որ բարձր և ապահով տեղ նստած նայում էր մեծ ուշադրութեամբ կալանա-

ւորին, մի սաստիկ գոչիւն արձակեց, որ դղրդեցրեց շրջակայ լեռները, հետևեալ խօսքերով.

— «Տղերք, ի՛նչ էք քնած, Վիշապը վանդակը կոտրեց»: Այս գոչիւնի վրա հաւաքվեցին հաղարաւոր մինը միւսից աւելի ամենի գազաններ, իսկոյն շինեցին երկաթից մի ահագին վանդակ, մօտեցրին նոր վանդակը կոտորածին, յետոյ հաւաքվելով Վիշապի շուրջը մի այնպիսի սարսափելի աղմուկ բարձրացրին, կարծես թէ երկինքը դիպչելով երկրին ջարդվեց, փշրվեց: Այդ աղմուկը երեք անգամ կրկնվեց մեծ դազանակների զարկերի հետ միասին, որ ունէին գազանները ձեռքերում և որոնցով խփում էին Վիշապի վանդակին: Վիշապը այդ աղմուկներից զգուած մտաւ նոր վանդակը: Փակեցին գազանները վանդակը և փոքր ինչ հանգստացան, բայց և այնպէս նրանք չէին դադարում հսկել Վիշապին: Առիւծն էլ իր տեղը նստեց, ուժեղ պոչը սկսեց բաւականութեամբ շարժել, բայց և այնպէս նոյն ուշադրութեամբ հսկում էր նրան, ինչպէս առաջ:

Այդ միջոցին, երբ ցրվեցան գազանները շրջակայքում, խորամանկ աղուէսը վազում էր դէպի մօտակայ գիւղը: Ես բռնեցի նրա պոչից և հարցրի նրանից, «Ո՞ւր ես գնում, աղուէս եղբայր»:

— Է՛հ, ոչ մի տեղ, այս տեղ մօտիկ գործ ունէի:

— Ասա, աղուէս եղբայր, ի՛նչու էք կալանաւորել Վիշապին, մի՞թէ ձեզ նա վնաս է տալի:

— Յիմար մարդ, դարձաւ ինձ աղուէսը բարկացած, Թնչալէս չէ տալի վնաս, նրա բերանի բոցերը այրում են անտառները և դաշտերը, որտեղ որսում են մեր առիւծ, գայլ և վագր եղբայրները, որտեղ կերակրվում են մեր եղբայր փիղը, ռնգեղջիւրը և մեր միւս եղբայրները և քոյրերը, այրում է դա իր սարսափելի բոցերով գիւղերը, որտեղից էս երբեմն ողորմութիւն եմ խնդրում:

Ասաց իմաստուն աղուէսը և շարունակեց իր ճանապարհը դէպի գիւղը: Չանցաւ շատ ժամանակ առիւծի մօնջիւնը կրկին դղրդեցրեց շրջակայքը:

— «Տղերք, եկէք խորհրդի»:

Հաւաքվեցին խորհրդի, շատ խօսեցին, շատ վիճեցին: Ի միջի այլոց աղուէսը ասեց Հետեւաւ ճառը յուսահատ և համոզեցուցիւ կերպով:

— Ես կամենում էի առաջարկել, բարեկամ, որ մենք օգնութիւն փնտռենք և խնդրենք մեղուների հասարակութիւնից:

Աղուէսի դատողութիւնը ընդհատվեց սաստիկ դղրդիւնից, կարծես երկինքը երկրի վրա ընկաւ, այդ Վիշապի աղաղակն էր: Ես երկիւղեցի կրկին թագնվեցի կոճղի տակ: Հաւաքվեցին գազանները և շրջապատելով Վիշապին՝ գննեցին վանդակը, կտրած չէր արգեօք նա: Վանդակը անխնաս էր:

Այդ ժամանակ առաջարկվեցաւ աղուէսի միջոցը Վիշապին դիմադրելու համար: Ընդունվեցաւ աղուէսի

առաջարկութիւնը, հրաւիրվեցաւ մեղուները հասարակութիւնը: Եկան մեղուները, փորձեցին իրանց ոյժերը և ամեն մէկը աշխատեց Վիշապի աչքերը խայթել, կուրացնել նրան: Բայց այս միջոցն էլ իզուր անցաւ, որովհետեւ Վիշապը կատաղած այրեց իր բոցային լեզուներով մեղուների թւերը և վերջինները հրաժարվեցին շարունակել պատերազմը ամեն հազանի հետ: Վիշապը հանգիստ պարկած էր: Բայց մի կարճ միջոցից յետոյ կատաղեց, փրփրեց և աղաղակեց ուժգնութեամբ «Ա՛ւ, դու այստեղ ես, այս ասելով նա ջարդեց վանդակը և յարձակվեց ինձ վրա: Նախ ես աշխատեցի կռվել, շատ էի փրփրել, քարեր գցեցի վրան, բայց նա չէր նայում քարերիս, կատաղած մօտենում էր ինձ:

Ես վազեցի, նա իմ հետեւից, այսպէս երկար ժամանակ վազեցինք: Յետոյ նա ինձ բռնեց, ես աղաղակեցի և զարթեցի:

IX

— Ասեց Զիօն և բոլոր մարմնով սկսեց դողալ: Նրա դէմքը և աչքերը սարսափելի կատաղութիւն էին արտայայտում այդ րոպէին: Ես սկսեցի վախենալ նրանից: Ոտքերս ու ձեռքերս դողում էին երկիւղից:

Երբ լուսացաւ, ես վեր կացայ տեղիցս, իսկ Զիօն նստած, աչքերը մէկ կէտին լառած նայում էր անդա-

դար: Ես Զկօյի ձեռքը բռնեցի ասելով «գնանք, Զկօ, մէյդանը գործ գտնելու»: Նա ոչինչ չասեց և հետևեց ինձ աչքերը գետին գցած:

Հասանք մշակների մէյդանը: Այդ տեղ գործ փնտռող մշակները այնքան շատ էին, որ անկարելի կը լինէր դրանց թիւը իմանալ, եթէ ամբողջ օրը համարէինք նրանց:

Զարմանալի է. ամենի ճակատին միւսնոյն դրոշմն էր, ինչ որ Զկօյի Յուպահատութիւն: Բայց Զկօյի յուսահատ դէմքը և քաջութիւն էր արտայայտում, իսկ այս մշակները դէմքերը յուսահատութիւն, թուլութեան հետ:

Այն միջոցին, երբ մենք կանգնած էինք մշակների մէջ, մօտեցան մեզ մեր ճանապարհակից և գելագի ընկերները և ուրախութեամբ ողջունեցինք միմեանց, իսկ Զկօն մռայլ էր: Ես հարցրի նրանց դրութեան մասին: Մի քանիսնեք զրութիւնը մերի նման էր, իսկ մի քանիսնեք էլ այնպիսի բաներ էին պատմում, որ մարդ սարսում էր: Վերջիններից մէկը ասում էր հետևեալը.—

«Նրբ մենք ձեզանից բաժանվեցինք, Յարօ ջան, դիմեցինք երկուսս մի փոռչու, գիշերելու տեղ խնդրելու համար: Նա համաձայնեց միայն այն պայմանով, որ մէկը մեզանից փռնի բոլոր աղալը թափէ, որ շատ էր, իսկ միւսը, այսինքն ես, որ ալիւր մաղէի որոշեալ ժամանակ, իսկ ժամանակ որոշելը փոռչուց էր կախված:

Մենք համաձայնեցինք և սկսեցինք գործը: Շատ և շատ աշխատեցինք. ճանապարհից յոգնած՝ այտուղ աւելի յոգնեցինք: Ես այնպէս յոգնեցի, որ մի քանի անգամ բռնու տարաւ, նոյնքան անգամ զարթեցրեց ինձ անգութ փոռչին երկայն թիակի ծայրով խփելով: Շատ աշխատեցինք: Մէկ էլ լսենք աքաղաղը կանչում է լուսադէմին:

— Այժմ բուռական է, որդիք, քնեցէք, — ասաց փոռչին:

Յետոյ, դու կարծում ես, Յարօ ջան, մենք քնեցինք: Եթէ դու կարող ես ասել, որ Վայէնը դժողքի բոցերի և սողունների մէջ կարող էր հանգիստ լինել, այնպէս էլ մենք, Փռնչին մեզ քնելու տեղ ցոյց տուեց փռնի վառարանի տանիքը, որ տեղ պարկում են իրանք ձմեռը, իսկ ամառը անկարելի է այնտեղ պարկել, որովհետև ամբողջ գիշեր փուռը վառ է լինում՝ մինչև լուսանալը հաց են թխում: Իսկ իրանք ամառը քնում են կշռի մօտ եղած դազգի վրա, որտեղ ուրիշների խմորից գնդակներ են շինում: Դուրսը սպասիկ անձրև էր այդ պատճառով մենք ներսը մնացինք և պարկեցինք վառարանի տանիքի վրա: Բայց սաստիկ այրվում էինք: Մէկ կողքից միւս կողքն էինք շրջում մինչև լուսանալը: Տաքութիւնը մի կողմից էր մեզ չարչարում, մանր սև միջատները միւս կողմից: Այդ միջատները ցորենի չափ են և գոյանում են ալիւրի թէփում: Նրբ լուսացաւ մենք

բորորովին հեռացանք փռնից: Նոյն օրը իւրաքանչիւրը մեզանից կարողացաւ 40—50 կոպէկ աշխատել՝ աղաթ թափելով, գորգերի փոշին մաքրելով, լուացք կրելով, ցետի, աղիւս և վերջապէս ամենայն տեսակ փոքր և մեծ աշխատանքներ կատարելով, որոնց համար վճարում էին երկուսից մինչև քսան կոպէկ:» Իսկ մի ուրիշը պատմում էր հետևեալը.— «Երբ մենք հեռացանք ձեզանից, ճանապարհին մի երիտասարդ քաղաքացուց, խնդրեցինք թէ չի կարող նա մեզ տեղ տալ գիշերելու:—Վա, աչքիս վրա, ասաց նա և ցոյց տալով լի թաղկենակը աւելացրեց «սըա միջի բաները միասին պէտք է ուտենք: Ո՞րտեղից էք գալի, սիւրբիք,» հարցրեց մեզ բարի քաղաքացին:— Սուրբ Կարապետի մօտից, աղա,— «Տօ, այնտեղից այստեղ այդպէս յոգնել էք, ի՞նչ ջահէլներ էք»—Աղա, տասնհինգ օր ոտով ենք գալի:— «Հա, բայց այդ ուրիշ է եղել, ես կարծեցի Հաւլաբարի սուրբ Կարապետից էք գալի, փոխ գնամ նրա ողորմութեան:»

Այս բարի քաղաքացին մեզ տարաւ իրանց տուն: Նրա մայրը և քոյրերը շատ ուրախացան մեզ տեսնելով և դարձան դէպի երիտասարդը ասելով.— «Գիգօ հիւրեր ես բերել, այ լաւ ես արել»: Մենք հանգստութեամբ և ուրախութեամբ ընթրեցինք տանտիրոջների հետ: Աստուծոյ սեղանի վրա կար պահիր, հաց, ձուկը և ձըմերուկ: Յետոյ մեզ համար անկողին ձգեցին և մենք

շատ անուշութեամբ քնեցինք մինչև առաւօտը: Երբ առաւօտը դուրս էինք գալի գործ փնտռելու՝ երիտասարդը շատ աղաչեց մեզ միշտ իր մօտ գիշերել. մենք, ի հարկէ, մեծ ուրախութեամբ ընդունեցինք բարի մարդու հրաւերը: Նա մի համեստ դագաղ—թէլ շինող էր, ինչպէս իմացանք յետոյ նրա բարի և գեղեցիկ քոյրերից: Երբ տանից դուրս եկանք մենք ճանապարհին պատահեցինք մի տիկնիսեցու, որը մեզ հարցրեց, թէ մենք երբ ենք եկել, ասացինք երէկ, ասաց «լաւ է», յետոյ տեղեկանալով մեզանից, որ մենք գործ ենք փնտռում, մեզ տարաւ մի շատ նեղ և ցեխոտ փողոց ասելով, որ մեզ գործ կը յանձնի: Յետոյ ներս տարաւ մեզ մի տան գաւիթ, որտեղ սարսափելի զարշահոտութիւն էր տիրում այնտեղ դիզած սառած և նեխած արիւնից, ոչխարների և կովերի հոտած թափաններէ: Մտալաճառը (ինչպէս երևում էր) մեզ հրամայեց այդ բաները թափել և շուտ թափելու համար իւրաքանչիւրին խոստացաւ մէկ մէկ բուբլի տալ: Մենք շատ ուրախացանք, թէ և ծանր և անտանելի էր մնալ այնտեղ գոնէ հինգ ըոպէ: Բայց մենք ստիպւած էինք այդ գործը կատարել: Շուտ մենք քթոցները լցրինք և մօտիկ եղած դաբաղխանայ անուանված ձորը թափեցինք: Շուտ վերջացրինք գործը և ստացանք խոստացած վճարը: Յետոյ իմացանք, որ այդ մտալաճառը փոխանակ վարչութիւնից նշանակած տեղը մօրթելու, որ քաղաքից շատ

Հեռու էր, մօրթում էր այդ տեղ ծածկաբար: Նրա ընկերը մատնել էր նրան: Եթէ ճիշտը խմանային, որ դա վարչութեան հակառակ է գնում 25 բուրլի տուգանք կը վերցնէին լանցաւորից, այդ պատճառով շտապեցնում էր նա մեզ: Իսկ խեղճ Մէհրաբը գեռ իր կնոջը չէր գտել: Այսպէս պատմեցին բոլոր մեր ընկերները իրանց դրութեան մասին: Երբ մեր խօսակցութիւնը վերջացաւ՝ մօտեցաւ մեզ մի շատ հաստ քաղաքացի և հարցրեց մեզ, թէ օրը մենք որքանով կաշխատենք:

Մենք հետեւելով ուրիշ մշակներին խնդրեցինք 70 կոպէկ:

Օհ, շատ է, օրհնածներ, այս թանկութեանը թնչպէս կարելի է այդքան վճարել: Մի սալ գտնին որքան եմ տալի, գիտէք, չորս բուրլի, վարպետներին 2—3 բուրլի, լետոյ իմ ընտանիքի վրա որքան եմ ծախսում, գիտէք,—նա սկսեց մէկ մէկ համարել կնոջ թանկագին շորերից սկսած մինչև կանաչեղէնը, թէ որքանով է գնում այժմ և առաջ այդ բաները որքան էժան էր ձեռք բերում: Խօսքը վերջացրեց կէս բարկանալով կէս ցաւալի ձայնով—«բաս դուք Աստուած չունէք, որ 70 կոպէկ էք պահանջում»: Մի մշակ օրա վրա խղճալով յայտնեց, որ 60 կոպէկով պատրաստ է վարձվել: Իսկ մի ուրիշը միւս ծայրից 50 խնդրեց: Այսպէս, քաղաքացիներ վարձը մինչև 40 կոպէկի հասցրեց ամեն անգամ

գանգատովելով թանկութեան վրա և կրկնելով իր ընտանիքի վրա արած ծախսերը:

Վերջը մենք ճարտահատեալ համաձայնեցինք 40 կոպէկով վարձվել: Քաղաքացուն հինգ մարդ էր հարկաւոր: Ես, Զիօն և ուրիշ երեք հոգի հետեւեցինք նրան: Տունը Մէյդանի միւս ծայրին էր, որտեղից երևում էր, թէ որքան մշակ վարձվեցան և որքան անգործ մնացին: Հինգերորդ մասը միայն վարձվեց, իսկ մեծ մասը ցրվեցաւ փողոցները աղալ թափելու: Կը գտնեն արդեօք փողոցներում մի գործ: Եթէ չը գտնեն, այնպէս կը չարվեն, ինչպէս երէկ ես և Զիօն: Անգութ Վիշապ, նրանց էլ ես հալածում:

X

Այսօր տասնհինգ օր է մեր Տիխիս լինելը: Մե օր միւսից աւելի ծանր նեղութիւններ կրելով հագիւ ենք կարողանում մեզ կերակրել: Այդ միջոցներին մեզ յաջողեց տիկնոջը վճարել պահանջած փողը կորցրած պաւաններին փոխարէն: Ի հարկ է, նա շատ ուրախացաւ և ինձ շատ օրհնեց: Միևնոյն ժամանակ խրատեց ինձ հեռանալ մօռլ և վտանգաւոր Զիօյից: Ես հեռանալով տիկնոջից ճանապարհին պատահեցի մի շատ լաւ հագնուած աղայի: Նա տեղեկացաւ ինձանից, թէ որտեղացի եմ և քանի ժամանակ է իմ Տիխիս լինելը: Յետոյ ինձ

առաջարկեց նա կը համաձայնիս արդեօք Ներսիսեան դպրոցում ծառայել ամսական ութ ռուբլի վճարով, կերակուրը, տունը դպրոցի կողմից: Ես ուրախութեամբ ընդունեցի աղայի առաջարկութիւնը, Միայն ինձ անհաստացնում էր Զկօյի վատ դրութիւնը: Այդ միջոցին պատահեց ինձ մեր ընկերներէց մէկը և յայտնելով ինձ, որ ինքը կապալով գետին է վերցրել փորելու, որ իրան մշակներ է հարկաւոր և որ ես չէի գնայ արդեօք նրա մօտ վարձվելու: Ես մերժեցի, յայտնելով, որ ես արդէն վարձված եմ և մատնացոյց արի Զկօյին, որը լսելով այն հետեւեց նրան և խնդրեց ընկերոջս աշխատելու հեռացնել ամենայն առիթ, որ կարող էր նեղացած Զկօյին բարկացնել: Զկօյին նշանակվեցաւ ամսական 15 ռուբլի, հացը, տունը և ուրիշ պարագաները իր կողմից:

Ընդունվեցի ես Դպրոցում: Ինձ յանձնեցին երկու դասատուն ամեն օր մաքրելու, որդեգրներին կոշիկները վաքսելու, նամակներ հոգաբարձուներին, ուսուցիչներին և փոստատուն տանելու, վերջապէս այնպիսի աշխատութիւններ, որ ես կարողանում էի առանց մեծ դժուարութիւնների կատարել: Ես այդտեղ ինձ աւելի բաղաւոր էի զգում, քան աղս թափելիս և ուրիշ սրա նման անտանելի աշխատութիւններ կատարելիս: Ո՛րքան ուրախանում էի, երբ փոքրիկ աշակերտները հաւաքվում էին շուրջս և անկեղծ ուրախութեամբ հարցնում էին ինձ՝

— Յարութիւն, դու հայ ես, Հայաստանիցն ես եկել:

— Այո, սիրելիս, Հայաստանից:

— Ո՛հ, երանի քեզ, Յարութիւն, դրախտիցն ես գալի:

Ասում էր ինձ մի առոյգ և գեղեցկադէմ 14 տարեկան պատանի:

Յետոյ, երբ ես նրա հարցասիրութեանը բաւականութիւն էի տալի, նա աչքերը գցում էր գետին և սկսում էր մտածել, յետոյ յանկարծ անսպասելի հարցեր էր առաջարկում, որ նրա պատանեկական անկեղծ սրտից էր բղխում:

Այդ միջոցին գանգահարեցին և Արշակը գնաց դասատուն:

Այդ ժամանակ մօտեցաւ ինձ դպրոցի Ղազօ անունով Ղազախեցի հայ ծառան: Շատ ծաղրածու էր փուճը: Նրա դէմքը երբեմն այնպիսի արտայայտութիւն էր ստանում, որ մարդու ծիծաղ էր յարուցանում, իսկ երբեմն այնքան յարգանք և կարեկցութիւն, որ մարդակամայ յարգում էր նրան և կարեկցում: Հասակը կարճ էր, ինքը նիհար:

— Յարօ, գիտես ի՞նչ եմ ասելու, մօտեցաւ նա ինձ այս խօսքերով:

— «Կոնծենք գինի, քսակս լիքը լինի, ում ինչ ուզում է լինի, աշխարհում ինձ դարդ չի լինի», յետոյ

նա աւելացնում է, «դարդս կը փախչի, եթէ մի սիրուն կին մօտս թուչի»: Իսկ ռամիկները գիտես թնչ են ասում՝ ճակատս թաց, աչքս լաց, սիրտս գոց, սոխ ու հաց»:

— Այդ դու ես ասում, մթթէ դու ես գրել այդ ոտանաւորը:

— Ուզում ես ասել թէ ես եմ հեղինակել այսինքն խելքիս գոր տուէր, հա, բաս, ես պարոն Ղազօ Կարեւորս:

— Այդ թնչ տեսակ ազգանուն ունիս, Ղազօ:

— Ի՞նչ տեսակ է, հը, քեզ էլ չը դուր եկաւ... հա, նա ոչ ոքին չի դուր գալի:

— Այս ասելով Ղազօն գնաց դէպի իր վերակացուն, որը իր կերպարանքին այնպիսի կատաղութեան արտայայտութիւն էր տուել, որ Ղազօյի փոխանակ, ես կը դողայի, իսկ նա անվրդով էր: Վերակացուն 23 տարեկան երիտասարդ էր, աշակերտ ժամանակը նա ամենաբուժն է եղել, վախկոտ, լրտես տեսուչի մօտ, ուսուցիչներին և աշակերտներին կողմից և վերին աստիճանի շողորթութ նրա մօտ, որից օգուտ ունէր: Որքան նա վախկոտ է հոգաբարձուի առաջ, այնքան նա անգութ և խիստ է մեր, ծառաների առաջ, Ահա այս շողորթութեան և ուրիշ այդպիսի յատկութիւնների համար ստացաւ այդ պաշտօնը, որի վրա բարկացած էր Ղազօյի ազնիւ հոգին:

— Ի՞նչ էք պարապ շրջում, չէ՞ք ամաչում, դատարկապորտներ, դարձաւ վերակացուն Ղազօյին, ինձ վրա էլ մատնացոյց անելով:

— Պարապ չեմ շրջում, պարոն վերակացու, դատարկ տիկը գլորվում էր պատշգամբի վրա, վազեցի բռնեմ՝ նա բարկանալով ասեց ինձ՝ «Թնչ ես անում, դատարկ»: դատարկը դու ես, չիմար, ասեցի նրան, եկայ քեզ բռնելու և գինով լցնելու:

— Ի՞նչ ես չիմար դուրս տալի:

— Զէ ուղիղն եմ ասում, պարոն վերակացու:

— Լաւ, պատշգամբի վրա նվ... ա, թնձ ես ասում, դու...:

— Զէ, չէ, քեզ չեմ ասում, դու տիկ ես, կամ դու դատարկ ես, մարդը դատարկ կը լինի, թէ և կան մի քանի դատարկ տեղեր, օրինակ «ստամոքսը» քաղցած ժամանակ, գլուխը՝ շատ փքվելուց և...

— Լաւը, դու անզգամ, եթէ ոչ...

Նա կատաղութիւնից խօսքը չը կարողացաւ վերջացնել, նրա դէմքը դեղնեց, չետոյ կապտեց նրա «ես»ը ջաղջախուած էր: Իսկ Ղազօն մեծ սառնասրտութեամբ շարունակում էր խօսել նրան, «Առհասարակ, ասում էր նա, մարդոց վրա է խօսքս, պարոն, նրանց մէջը, եթէ ճիշտը կամենում էք իմանալ, լիքն էլ է լինում, դատարկ էլ, թէ դուք ո՞րն էք նրանցից, այդ տէրտէրից կարող էք ստոյգն տեղեկանալ, ահա նա գալիս է:

ձեռքս որ գալիս էր կրօնացոյց քահանան, որին տեսնելով, վերակացուն փոխեց իր ձեռք, եղաւ քաղցրախօս և դառնալով դէպի Ղազօն ծիծաղելով ասեց «Թնչ սուտ կատակներ գիտես, Ղազօ, սիրեցի քեզ, հաւատայ:» Վերակացուն վախեցաւ տէրտէրից, թէ և կարեք չը կար վախենալ ու դրանից, բայց նա մոռացել էր այդ վայրկենին: Տէրտէրի յայտնվելը և վերակացուի անյայտանալը մէկ եղաւ: Այդ այն կրօնացոյց տէրտէրն է, որ մի քանի տարի է դասաւորութիւն է անում:

Այդ մեջոցին մօտեցաւ ինձ Ղազօն, որը գնացել էր տէրտէրի ցուցակը բերելու:

—Այս էլ այսպէս, իսկ դու Թնչ ես յօնքերդ կիտել:

—Ի՛հ, Թնչ ասեմ, տխուր եմ, Ղազօ ջան:

—Աստուած ողորմած է, Յարօ, Թնչ ես տխրում: Իմ տխրութիւնս աւելի մեծ է. մաղերս սպիտակել են հոգսերիս մէջ. այստեղ ամեն հարուած ինձ է դիպչում, մանաւանդ աշակերտներին:

Ղազօն աշակերտներին շատ էր սիրում, աւելի քան ուրիշ բան երկրիս երեսին: Բայց նոքա էլ դրան հանգիստ չէին թողնում, հալածում էին, գետնախնձորներ, սոխեր խփելով դրա գլխին: Չանցաւ հինգ րոպէ՝ մի աշակերտ, որին Ղազօն թրջած մօւկն էր անուանում, մօտեցաւ և սոխով խփելով Ղազօի գլխին փախաւ աշակերտների մէջ, Ղազօն նրա հետեւից:

XI

Շաբաթ երեկոյեան, երբ բոլոր գործքերս վերջացրի, նստեցի ուսումնարանի գաւթում եղած ծառի տակ և սկսեցի մտածել, շատ մտածեցի: Մտածում էի Լուսինթագիս վրա. երեւակայում էի նրա յուսահատ դրութիւնը: Երեւակայում էի, որ նա աղբիւրի մօտ եղած մեր նշանակած ծառի տակ նստած, այնտեղ, որտեղ ես էի նստում աղի ողորմ լացում է: Երեւի նա Յարօյի փոխարէն ծառի հետ է խօսում, գրկում և համբուրում նրան, ինչպէս ես այժմ կամենում եմ այս անխօս ծառին գրկել և համբուրել: Այժմ նա, երեւի, խօսում է սարերի, մեր գեղեցիկ արտերի և ջրերի հետ, խօսում է և խնդրում է Հայաստանի թռչնիկներից, որ դան այս դառը պանդխտութեան մէջ մխիթարեն, սփոփեն ինձ:

Եթէ նա դադարել է ինձ սիրելուց: Ո՛հ, այն ժամանակ ես կորած եմ, բայց այդ չի կարող պատահել: Նա ինձ սիրում է: Թույլում է ակռաւը: Սիրտս տրոփում է: Նստեց նա ծառի վրա, ոտքերս թուլանում են: Եւ ես խնդրում եմ Մշու Սուրբ Կարապետից արգելել նրան գուժաբեր կտուցը բանալու: Ակռաւը թռաւ, հեռացաւ առանց իր սարսափելի ձայնը հանելու: Ես փոքրը ինչ հանգստացայ, բայց և այնպէս սիրտս տրոփում էր: Սլաքի նման թռաւ ծիծեռնակը, նստեց ինձանից

քսան քալլ հեռու, ուրախութեամբ նայեց ինձ վրա և սիրուն կտուցը բանալով քնքշութեամբ երգեց: Նրա երգի մեղմ ձայները լափանցեցին սիրտս և մեղմացրին սրտիս սաստիկ բարախումը: Նրա երգը շատ բան էր ասում, բայց միայն, կարծեմ, հետևեալ խօսքերը հասան ականջիս՝ թէ «սիրում է ինձ Լուսնթագս և առողջ է նա»: Հեռացաւ աւետարներ թռչունը, սիրտս հանգստացաւ և թռաւ նա, վերցնելով գետնից մի հատիկ ցորեն: Յօրենը, երեւի, տանում է իր սերելիքն կրտուցը դնելու: Իսկ ես, դժբախտս, իմ սերելիքն ոչինչ չեմ տալի, ոչինչ չեմ ուղարկում:

Յետոյ մտածեցի ծնողներս և քոյրերս վրա: Արդեօք, թնչպէս են նրանք, Մարկոս էֆէնդին արդեօք նեղացնում է նրանց: Սիրուն գոմէշներս ուրախ արածում են արդեօք մեր դաշտերում, թէ Վիշապն վանդակն են ընկել: Վերջին միտքը ինձ անհանգստացնում էր: Բայց ոչ, էֆէնդին կը սպասի իմ վերադարձին: Ես այս յուսով հանգստացնում էի ինձ:

Յետոյ մտածում էի ես խեղճ Զիօյիս վրա: Նրա յուսահատ դրութիւնը ինձ շատ էր անհանգստացնում: Ես վախենում էի, որ խեղճը կը խելագարվի և սպասում էի: Մտաբերելով նրա ամբողջ կեանքի ծանր դրութիւնը:

Մտածում էի մեր ընկերներն և բոլոր մշակիներն վրա, և յիշում էի հայրենիքից մշակութեան համար

հեռանալու ժամանակը և չէի գտնում այդ շրջանի սկիզբը: Յիշում էի մշակութեան համար հայրենիքից հեռանալու պատճառները և շատ էի մտածում դրանց վրա: Շատ էի մտածում և չէի գտնում ոչ մի միջոց այդ սարսափելի վտանգի դէմ: Յիշում էի Վիշապի գորութիւնը, դրան դիմադրելու ինձ թոյլ էի զգում և յուսահատվում էի:

Յիշում էի տիկնոջ արարքը, փռնչու վարմունքը իմ ընկերների հետ, իմ արասիկս կորցնելը, նոյն օրուայ մեր սովը, իմ ընկերների պատմած արհաւերքները և վերջապէս Զիօյի ծանր տառապանքը:

Յիշում էի այս բոլորը, մտածում էի սրանց վրա և ահա սարսափելի Վիշապը իր անհամար հրեղէն լեզուներով երևում է ինձ: Կրկին մտածում էի այս բոլորն վրա: Այսպիսի մտածութիւնների ժամանակ յանկարծ Ղազօյի վրդովված ձայնը լսեցի, որ կանչում էր ինձ: Ես ծառի տակից երևեցի: Նա առաջ վազում էր, յետոյ մտածելով, որ լաւ չէ, իր կարծիքով, այս դէպքում վազել, նա դանդաղեցրեց քայլերը:

Ես մօտեցայ նրան և հարցրի:—

— Ի՞նչու էիր կանչում Ղազօ:

— Առաջ դու ասա, մտախոհ դէմքով դիմեց նա ինձ, ո՞ր կողքիդ վրա ես վեր կացել այսօր առաւօտ,— Այս նշանակում էր ուրախ եմ, թէ տխուր:

—Աջ կողքիս վրա, ասեցի ես, որ նշանակում էր, թէ ես ուրախ եմ:

—Բաս հիմա չ'արժէ ասել, յետոյ կ'ասեմ:

—Ի՛նչու, ասա, հիմա ասա, հետաքրքրվում էի իմանալ բանը թնշումն է:

—Ձէ, հիմա համ չի ունենայ, յամառում էր Ղազօն:

—Լաւ, մի ասիր: Գալիս ես գնանք գինետուն:

—Գնանք, Յարօ ջան, կոկորդօ ցամաքել է, գընանք աղաչում էր նա:

—Ասա դեռ, թնշ էիր ասելու, յետոյ գնանք:

—Ա՛յ, ինչ էի ասելու, ասեց այս և հանեց Ղազօն գրպանից երկու նամակ: Ես շուտ ձեռքից խլելով նամակները և նրան հինգ կոպէկ տալով ասեցի:

—Միայն դու գնա, գինետուն, իսկ ես նամակները կը կարդամ:

Նամակները հասցէն այսպէս էր «Այս նամակս հասանի իմ որդի Յարօ Կարապետեանցին»: «Այս նամակս հասանի իմ սիրելի Յարօյին»:

Վերջապէս, մօրիցս և Լուսնթագիցը լուր:

XII

Լուսնթագիս նամակում հետեւեալը կարդացի.

—Իմ սիրուն եւ անգին Յարօ

Արտասուքս խեղդում է ինձ և ուրախութիւնս ար-

գելում է ասել քեզ այն՝ ինչ որ զգում է այժմ իմ դժբաղտ և մաշուած սիրտը: Ուրախութեանս չափ չը կայ, որ այս խօսքերս պիտի կարդաս դու, որ այս թուղթս պիտի քո ձեռքում, քո ծոցում լինի: Իրա համար ես շատ համբուրեցի այդ բաղդաւոր թղթին: Ինձ նամակ գրի, Յարօ ջան, ես այս տեղ մենակ եմ, անտէր եմ, թէ և հայր ունիմ և քաջ եղբայրներ բայց դու աւելի թանկագին ես, քան նրանք, դու աւելի սիրելի ես իմ հոգուս: Դու մի տրտմիր, Յարօ ջան, ուրախ եղիր և միշտ երգէ մեր սիրած երգը, երգէ, որ ես լսեմ մեր թռչնիկներից և ուրախանամ:

Շուտ արի ինձ մօտ ես մենակ եմ: Բայց այդ տեղ դու շատ մի տրտմիր, ուրախ եղիր միշտ. ես ուրախ եմ:

Մայն ինչ միտք Լուսնթագ:

Ձէ դու ուրախ չես, արտասովում ես, ես այդ տենում եմ, մի խաբիր, մի կեղծիւր, թշվառ Լուսնթագ: Ես համբուրեցի նամակը և ծոցս դրի, յետոյ հանեցի կրկին կարդացի, կրկին համբուրեցի և ծոցս դրի: Ո՛հ, շատ քաղցր էր և դառն էր նա, օրովհետեւ նրանով ուրախացայ և տրտմեցի: Յետոյ կարդացի մօրս նամակը: Միեւնոյն սուգը, միեւնոյն տրտմութիւնը և դառն դանդաղ պարունակում էր մօրս նամակը, նա սկսում էր այսպէս.

Աստուծոյն որդի Յարո զորոյն
Ողորմած Աստուծոյն զրկեց ինձ այն ուրախութիւնից, որ զգում էի որդուս ճակատը ամեն օր համբուրելիս և նրան զրկելիս: Աստուծոյն պատժեց ինձ այն տրտմութեամբ, այն ցաւով, որ զգում եմ այժմ քո հեռանալուց յետոյ: Գիշերները վաղ գնաւ տուն, որդիս, լուսահոգի հայրդ ասում էր, որ Տիկիստում աւագակներ, անառակներ շատ կան: Զգուշացիր նրանցից, հեռի եղբւր նրանցից: Քնելիս լաւ ծածկվիր, չը մըսես, չը հիւանդանաս: Գլուխդ լաւ պահիր, որդիս: Աչքդ լոյս, Յովհաննէս եղբայրդ տղա ունէ: Երեսայի մայրը ծնելիս քիչ մնաց մեռնէր, շատ էր նեղացած խեղճը: Տէրութիւնը, երբ իմացաւ, որ եղբորդ տղայ է եղել, եկաւ Երեսայի անունը նշանակեց զրքում և հրամայեց, որ այսօրվանից Երեսայի գլխահարկ տանք տարէնը 30 զրուշ (3 ըուբլի): Բայց մէկ դժբաղտութիւն պատահեց մեզ: Երբ մեր որդի, քո քոյր, Շուշանը մեր տանն էր՝ եկաւ Մարկոս էֆէնդին, պահանջեց պարտքը, մենք խնդրեցինք նրան սպասել: Նա բարկացաւ և ստիպում էր մեզ վճարել նոյն ըուբլին, ապա թէ ոչ, գոմշուկներդ կը վեցնեն, ասում էր նա: Յովհաննէսը աղաչեց այդ բանը չանել:—Ապա ի՞նչու չէք վճարում, ասում էր էֆէնդին:—Ապա ի՞նչու չէք սպասում, ասեց անմիտ Յովհաննէսը:—Այս խօսքի վրա բարկացաւ էֆէնդին և յարձակվելով Յովհաննիսի վրա սաստիկ ծեծեց նրան: Իսկ Շու-

շանը, որ սլատճառաւոր էր, վախեցաւ այս բանից և երրորդ օրը վիժեց Երեսան մեռած, ինքն էլ շատ հեռանդացաւ: Այժմ նա առողջ է: Եղբայրներդ ամբողջ օրը աշխատելով, չարչարվելով հագիւ են կարողանում տէրունական հարկը տալ:

Սալեան (Հողի հարկ) առաջվայ պէս պլիկեց (5—6 օրավար) 30 զրուշ (3 ըուբլի) են առնում, խոտից, գարուց, պտուղից տասանորդ առնում են առաջվայ պէս: Պտուղից առանձին, գինից, օղիից առանձին տասանորդ առնում են փողով ինչպէս առաջ: Տան հարկը շարունակում ենք տալ արժողութեան համեմատ 1000 զրուշից 4 զրուշ, իւրաքանչիւր ոչխարից 4 զրուշ (40 կոպ): Այս բոլորը մենք հագիւ էինք վճարում, այժմ ասում են, որ պէտք է հարկ նշանակեն և հետեւաւ կենդանիներին: Իւրաքանչիւր կովից պէտք է առնեն 6 զրուշ, ձիուց 6 զրուշ, եզից 7 զրուշ, գոմէշից 8 զրուշ, կով—գոմէշից 7 զրուշ, աւանակից 4 զրուշ և ուրիշ բաներից: Օհ, Աստուծո, մեր տունը կը քանդվի այն ժամանակ: Փառք Աստուծոյ, Բատալեան *) վերցրած է, թէ ոչ մենք բոլորովին կորած էինք: Մշու չըջակայքի գիւղացիներս պատրաստվում ենք Սուլթանին մէկ աղերս

*) Բատալեայ այն տուբն է, որ իւրաքանչիւր բնակիչ պէտք է տայ Սուլթանի պատերազմի ժամանակ 30 զրուշով:

ներկայացնել եղած հարկերը թեթևացնելու և նոր հարկեր չը վճարելու համար:

Յոյս կայ, որ այս աղերսը առաջի աղերսների նման անհետևանք չի մնայ: Աշխատիր փող շատ հաւաքել, որդիս, պարտքերը կրկնապատկւում են, բայց անձիդ շատ մի զորելի: Շուտ եկ, որդիս, ես ամեն օր մեծ անհանգստութեան և տրտմութեան մէջ եմ քո մասին: Դուրսդ լաւ պահպանիր, աչքի լոյս Յարօ ջան:

Ահա՛ ձեզ իշխող խաչ: Մարտի:

Ի՞նչ են ասում այս նամակները: Սրանց մէջ ըզզւում են միայն սուգ, տխրութիւն, վիշտ և թեթև ուրախութեան ժպիտ, այն ժպիտի նման, որով երկինքը ժպտում է բոսկապէս սաստիկ որոտման ժամանակ իր մեղմ փայլակով: Սուգ ազգի մէջ, սուգ քաղաքում, սուգ գիւղում, սուգ անձնաւորութեան մէջ, ամեն տեղ սուգ, միայն սուգ է տիրապետում: Իմ սիրտը, մօրս սիրտը, Զիօյի սիրտը և վերջապէս Լուսնթաղիս սրտիկը պատած է սուգով, տխրութեամբ, ցաւով և վշտով: Ժամանակի, սուգ, լաց և վիշտ է քո անունը:

XIII

Այս մտածմունքներս ցրվեցին հաստիկ վերակացուի հրամայական ձայնից, որ պատվիրում էր նամակները հոգաբարձուներին և փոստատուն տանել: Երբ ար-

դէն դասերը վերջացած էին, աշակերտները և ուսուցիչները ցրվել էին իրանց տները: Երբ մտայ ուսումնարանի գաւիթը ծիծաղս չը կարողացայ բռնել և չէր կարելի չը ծիծաղել: Ուսումնարանի ծեր, կաղ և կոյր կատուն լծած էր փոքրիկ կառքում, իսկ Ղազօն մտրակը ձեռքին հրամայում էր թոյլ կենդանուն առաջ, աջ և ձախ տանել կառքը: Կառքը շինած էր ծխախոտի մեծ արկղից ամրացրած երկու ամուր սունակների վրա, որոնց վրա ամրացրած էին երկաթեայ փոքրիկ անիւներ:

— Այդ ի՞նչ ես արել, Ղազօ, երեխայութիւնդ ես մտաբերել, հա, դարձայ ես նրան ծիծաղելով: — Առաջին որ ես գործ չունէի, երկրորդ քո խելքի բան չէ. պատասխանեց նա ծանրութեամբ: — Ձէ, ասա, Ղազօ ջան, հետաքրքրում էի իմանալ այդ ծաղրաշարժ վարմունքի պատճառը: — Ասեմ էլ չես հասկանայ, որովհետեւ պէտք է դու գիտենաս իւրացուցանել վերացական բաները. առանց իւրացուցման վերացուցումն անկարելի է, դու այս հասկանում ես, թէ ոչ: — Այդ ի՞նչ է, որ չը հասկանամ, մանկական բան է: — Հէնց այդ է պատճառը, որ չես հասկանայ, որովհետեւ պարոն վերակացուն ասում էր, որ մանկական, երեխայական բաներ հասկանալու համար հարկաւոր է մանկավարժ լինել, այն էլ Լիմցստանից, գլխումդ մտաւ, թէ ոչ, իսկ դու մանկավարժ ե՞ս, որ ինձ հասկանաս: — Իսկ դու մանուկ

ես, հը, Թնչու լուեցիր, կապվեցի՞ր, կտրվեցի՞ր, բարկացնում էի ես նրան իմ հարցերով։

— Կապվում են՝ կապեալները, կտրվում են կըտրեալները, դրաբար գիտե՞ս։

Ղազօն խօսքը նոր էր վերջացրել, որ մօտեցաւ տեսուչը կուշտ ծիծաղելով նրա ծաղրաշարժ սրամտութեան վրա, Ղազօն տեսուչին տեսնելով դեղնեց, մօլորվեց խեղճը։ Պէտք է ասած, որ տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, բոլորը սիրում էին Ղազօնի նրա սրամտութեան և ծաղրածութեան համար և չէին նեղանում նրա կծու, երկսայրի կատակներէից։— Այդ Թնչ ես արել, Ղազօ, դարձաւ տեսուչը Ղազօյին։— Գիտէ՞ք Թնչալէս է չարչարել ինձ այս կատուն, եթէ իմանալիք չէ՞ք ծիծաղիլ ինձ վրա, Պարօն տեսուչ։— Լաւ, այդ չարչարելու համար Թնչ պէտք է անես դրան։— Թնչ պէտք է անեմ, կձգեմ փոս, որ դառնայ խող։ Ա՛յ, դու փուչ, ասեց տեսուչը և հեռացաւ։

XIV

Մի կիւրախի օր եկաւ ինձ մօտ Մէհրաբը. խեղճը վշտից բոլորովին ընկճվել էր։ Նա էր սիրելի կնոջը, Վարդխաթունին, դեռ չէր գտել Տփխիսում։ 45 տարեկան Մէհրաբի մազերը ճերմկել էին 60 տարեկան ծերունու մազերի նման, դէմքը այլանդակված խորը և

բազմաթիւ կնճիռներով, նրա հսկայական հասակը ճրկվել էր խնձորենու ճղի նման։ Երբ նրա տունը, արտերը կրակի կերակուր արին Քրդերը և նրա անասունները յափշտակեցին, նա գնաց Կ. Պօլիս մշակութեան էր տունը վերականգնելու ցանկութեամբ։ Նա այդ ժամանակ 25 տարեկան առուչք, ուժեղ և հսկայական հասակով, երիտասարդ էր, ինչպէս պատմում էին նրան այն ժամանակից ճանաչողները։ Անվեհեր քաջութեան և հաստատ բնաւորութեան տէր մարդ էր նա։ Նա ծնված և սնված էր Սասնոյ լեռներում Սասնոյ քաջ ժողովրդի մէջ, բայց ամուսնացած էր դաշտեցիի վրա և ապրում էր Մշու դաշտում։ Քսան չորս տարեկան ժամանակ, երբ Մէհրաբը անցնում էր Մշու մի գիւղով հարուստ սպառազինած, ինչպէս Սասունցի սև ձիւ վրա նստած, նկատեց մի խումբ ջուր բերող կանանց մէջ մի շատ գեղեցիկ օրիորդի, որ Վարդխաթունն էր։ Մտրակեց ձին և մօտեցաւ նրանցից մէկին, մի ապուստ կնոջ ասելով «Մայրիկ, կասես սրա հօրը, որ Սասունցի Մէհրաբը ուզում է քո աղջկան» բոլորը զարմացան այս յանդուգն խօսքերը լսելով, բայց և գիտէին, որ Վարդխաթունի հայրը կը համաձայնի Մէհրաբին էր փեսայ տեսնել, իբրև քաջութեամբ հռչակված, գեղեցիկ և հարուստ երիտասարդի։ Կարճ ժամանակից յետոյ լեռնում է Մէհրաբի և 18 տարեկան Վարդխաթունի պսակադրութիւնը։ Մէհրաբը կամենում էր կնոջը տանել

Սասուն, բայց ծերունի աները խնդրում է նրան մնալ իր մի ու ճար Վարդխաթունի մօտ՝ առաջարկելով իր տունը, տեղը և անասունները:

Նա համաձայնում է, բայց մեծ գնով, որովհետև իր հայրը անխնայ է իրան, որ նա առանց իր հրամանի ամուսնացել էր և հեռացել էր հայրական տնից: Մէհրաբն վշտացած էր, բայց սիրում էր իր Վարդխաթունին, վերջինը իր հօրը, այս պատճառով նա մնաց դաշտում մի քանի ժամանակից յետոյ մեռնում է Վարդխաթունի հայրը և նա ու Մէհրաբը մնում են միայնակ: Երբ Մէհրաբը դեռ նոր էր սլակվել, Քրդերի մի խումբ յարձակվում է այդ գիւղի վրա, որտեղ ինքն էր բնակվում: Լսելով նա այս, նստում է իր սև ձիու վրա, թռչում է Ռէսի մօտ, որ նրա քաջ որդիներին հետը վերցնի Քրդերին գիւղից հեռացնելու համար: Ռէսը այդ ժամանակ տէրտէրի հետ ժողովել էր իր շուրջը գիւղի երկտասարդներին և հորդորում էր քրդերին դիմադրել, Հայերը դանդաղում էին, բայց երբ տեսան սպառազինած Մէհրաբին և լսեցին նրա վառուղ, անվեհեր խօսքերը՝ շտապեցին նրան հետևել, զինուորվելով պատահած բաներով, թիցով, բահով, կացինով մի քանիսը սրերով ու հրացաններով: Սկսվեց կռիւ: Արեւահէզ և կատաղի էր, նա: Քրդերը արդէն, կողոպուտը ձեռքին, չէին կամենում զրկվել դրանից, իսկ Հայերը տալ այդ նրանց: Բայց վերջը Հայերը թուլացան, դրանց մեծ

մասը կոտորվեց, մնացածը կամենում էր փախչել, բայց անվեհեր Մէհրաբի կատաղի գոչիւնը նրանց հոգի, սիրտ էր տալի, կրկին սկսվում էր կռիւը առելի կատաղի քան առաջ: Այսպէս երկու երեք անգամ Մէհրաբը արգելեց Հայերի փախչելուն: Առաջարկապետը սպանվեց Մէհրաբի սրով, Քուրդերը թուլացան, Հայերը սիրտ առան, վերջը առաջակներին գլխիկոր ջարդելով և կողոպուտի մեծ մասը նրանցից հետ խլելով վերադարձան տուն: Բայց ինչ են տեսնում, տները, արտերը ծխում են. քրդերը կրակի կերակուր արին գիւղը, Մէհրաբը կալածակի արագութեամբ թռչում է Վարդխաթունի մօտ: Նրա տունը այրվում է և իր սիրելին չը կայ: Մնում է նա քարացած, յետոյ ցնցվելով մտրակում է ձիուն դէպի կրակը իր Վարդխաթունի հետ այրվելու, ձին հակառակում է, երկտող անգամ է մտրակում, ձին մռնչում է առաջ է սլանում, բայց կրկին յետ է ցատքում: Մէհրաբը կատաղած է, հանում է ատրճանակը և նրա կռիով ձիու գլխին հարուածելով կենդանու կեանքին վերջ է տալի, յետոյ ցատկում է ձիուց, սլանում է դէպի հուրը, բայց այդ ժամանակ Վարդխաթունը դուրս գալով դրացիի տնից և նկատելով իր Մէհրաբին՝ թռչում է դէպի նա և նրա վիզը ընկնելով սկսում է աղիողորմ լալ: Այսպէս նրա տունը այրվում է երկրագործական գործիքների և ցորենի շտեմարանի հետ միասին, իսկ անասունները յափշտակվում են քրդերից: Մէհրաբը չու-

նէր տուն, ցորեն, գործիքներ ու գոմէշներ և նա աղ-
քատ էր: Նրա հարուստ և խիստ հայրը անիծել էր
նրան, իսկ վերջինը բարկացած էր հօր վրա և չը կա-
մեցաւ դիմել նրան: Մէհրաբը վճռեց գնալ մշակութեան
և իր կնոջը յանձնելով ազգականներէց մէկին՝ զնաց
Պօլիս: Ց տարի ոչինչ լուր չը կար Մէհրաբից, Վարդ-
խաթունն էլ իր օրերը անցնում էր տխրութեան և սգի
մէջ: Վերջը լսում է, որ իր ամուսինը գնացել է Տիփլիս:
Վարդխաթունը մի քանի ժամանակ տատանելուց յե-
տոյ վճռում է գնալ Տիփլիս իր ամուսնուն գտնելու և
գալիս է Մշեցի մի քանի պառաւ կանանց հետ: Եւ
այժմ նա Տիփլիս է, որին և փնտռում է իր ամուսին
Մէհրաբը և չէ գտնում վերջինը: Մէհրաբը յուսահա-
տութեան մէջ է. Ց տարուայ տաժանակիր աշխատու-
թիւնները և իր սիրելի կնոջ կորուստը նրան սպա-
նել էին:

— Սիրելի Մէհրաբ, իմացա՞ր որտեղ են բնակվում
Մշեց եկած բանւոր կանայքը: ասեցի ես նրան:

— Իմացայ և գնացի բացի մի տեղից՝ որտեղ՝ ան-
կարելի է գնալ:

— Ի՞նչու Մէհրաբ:

— Եթէ գնաս այնտեղ կամ պէտք է բոլորին սրի
քաշես կամ ինքդ քեզ սպանես, չը տեսնելու այն կեղ-
տոտութիւնը, որ նրանք թոյլ են տուել իրանց՝ Հայաս-
տանի մաքուր և սուրբ վարքի փոխանակ, այս խօս-

անգթութիւն է. մի հարուած և այսպիսի հարուած, բա-
ւական է Մէհրաբի մաշուած կեանքին վերջ տալ, նը-
րան սպանել:

— Յարձ, յանկարծ գոչեց Մէհրաբը, ոտքի կանգ-
նելով, ես գնում եմ այնտեղ, այդ անառակների մօտ,
գնում եմ դրանց երեսը ցեխելու, Վարդիկին ոտնատակ
տալու, արիւն, սուգ տարածելու նրանց անգութ սրտե-
րում, ես դրանց գլուխները այս րոպէիս... կը ջախջա-
խեմ, ասեց այս և արագութեամբ սլացաւ առաջ, ես
դրա թւից բռնեցի արգելելու իր կնոջը այդ դրութեան
մէջ տեսնելու համար, և դարձայ նրան այս խօս-
քերով:

— Մէհրաբ, մտածիր արածդ, քո գնալդ այնտեղ
այդ մտադրութեամբ անկարելի է, նրանց սիրեկաննե-
րը քեզ այնտեղ ծվիկ, ծվիկ կանեն:

— Թող անեն, եթէ կարող են, մոռացել ե՞ն նրանք
Մէհրաբին, Սասունցի Մէհրաբին:

— Վերջապէս, Մէհրաբ, ծեծելով կամ հայհոյելով
նրանց չես ուզղի:

— Կը սպանեմ բոլորին և վերջ կը տամ այդ ան-
կարգութիւններին:

— Չես կարող, դու մի թոյլ ծերուկ ես, առաջուայ
Մէհրաբը չես:

— Թոյլ ծերուկ եմ... Մէհրաբը չէմ... ասեց. այս
և թուլացած ընկաւ նստարանի վրա: Տիրեց լուութիւն

երկար ժամանակ, վերջը նա վշտացած ձայնով և վախից դողալով հագել կարողացաւ ասել այս խօսքերը։

— Գարօ, կարելի է, իմ վարդխաթունս այդտեղ...
— Ի՞նչ ես ասում, Մէհրաբ, ընդհատեցին ես նրա խօսքը, այդ կարելի բան չէ, քո վարդխաթունը հայրենիքդ դարձած կը լինի, քո վարդխաթունը և անառակութիւն... այդ ամօթ է քեզ, Մէհրաբ։

— Այո, Թարօ ջան, այդ անկարելի է, ներել։
— Բայց ես կերթամ նրանց մօտ և կը համոզեմ նրանց թողնել Տիփիսը, ասեցին ես, գլխաւորապէս իմանալու վարդիկի ովքեր են և հետագայ Մէհրաբից հետեւեալ խօսքերն ասելով նրան։

— Մէհրաբ, գնա Զկոյի մօտ, ես էլ շուտ կը վերադառնամ։

Ուղղիցի քայլերն ուէսին վախքին թաղը և կանգ առաւ այն տնակի առաջ, որտեղ բնակվում էին այն կանայքը։ Տնակը մտնելու համար մի քանի աստիճան պէտք է իջնել, իջաւ և մտաւ մութ և խոնաւ տնակը։ Տախտի վրա տարածած էր նոր գորգ, դրա վրա մի քանի մաքուր մութթաքեր, տնակի անկիւնում մի քանի սանդուղներ և կաթսաներ, իսկ պատերին վրա գինւորներէ պատկերներ, ահա տնակի մէջ եղած բաները։ Իսկ տախտի մի ծայրին նստած էին երեք կին, մէկը ըստ երևութիւն քառասուն տարեկան, միւսը աւելի ծեր, իսկ երրորդը ոչ աւելի քան երեսուն տարեկան։

Նրա գեղեցկութիւնը, նազելի հասակը և հրապուրիչ աչքերը իրաւունք էին տալի ինձ կարծելու, որ սա է վարդիկը։ Եւ սովորական ուղջոյն տալուց յետոյ՝ դարձայ ուղղակի երկտասարդ կնոջը՝ «Դու է՞ս վարդիկը»։
— «Այո՛ ես եմ, եղբայր, պատասխանեց նա Հայաստանցի կանանցը անծանօթ յամարձակութեամբ»։ — «Դու Մշեցի ես, վարդիկ» կրկին դարձայ ես նրան։ — Այո, եղբայր, Մշու դաշտիցն եմ։

— Քեզ այնտեղ, վարդիկ, ի՞նչպէս էին անուանում։
Նա այս հարցին վրա կարմրեց, յետոյ գեղեցիկ և բարեկացած դարձաւ ինձ, «Ի՞նչ ես այդքան հարց ու փորձ անում, իմ խոստովանահայրը խօ չես։

— «Ոչ, վարդիկ, քեզ վրայ նամակ կայ»։ — Ո՞վ է բերել, շտապով հարցրեց նա։ «Մէհրաբ, անունով մի ծերունի, նա այս անունը լսելով, նրա դէմքը մեռելային գոյն ստացաւ և երկար ժամանակ իր մեծ աչքերը ինձ վրա բեւեռութեամբ յետոյ չձաց «օգնեցէ՛ք» և ուշաթափ ընկաւ տախտի վրա։ Միւս կանայքը շրջապատեցին նրան, սկսեցին աշխատել նրան ուշի բերել, նրա երեսին ջուր սրսկելով, ականջները քաշելով, քիթը սեղմելով, վերջը նրանց յաջողեց վարդիկին ուշի բերել։ Ո՛հ, ես այդ ժամանակ, որքան խտրասիրտ էի, կարծես սրտիս մէջ ուրախանում էի։ Պառաւ որ վարդիկի քիթը սղմում էր և որը երկտասարդ կնոջ այդ անդունդը գոցողն էր, ինչպէս ասում էին յետոյ, հեռա-

ցաւ հիւանդից և մօտենալով ինձ՝ բարկացած գոչեց այսպէս. «Հեռացիր, դու անգութ աւագակ, թիչ ես ուզում խեղճ աղջկանից, սա չէ Վարդեսաթունը, սա, որին դու փնտռում ես, սա Վարդիկն է, սա ամուսին չունէ։ Պառաւրդեռ իր խօսքերը չէր վերջացրել, երբ լսվեց դռներին ուժգին զարկի՝ ձայն, որից նրանք բացվեցին և ներս մտաւ Մէհրաբը գոչելով՝ «Ո՛ր է Վարդիկը, ո՛ր է այդ անգամը, պէտք է սպանեմ դրան, ո՛ր է ցոյց տուէ՛ք դրան»։ բոլորը քաղացած, ապշած նայում էին կատաղած ծերունուն։ Իսկ Վարդիկը պառաւրդ հետեւից թափանցած երկիւղից և ամօթխածութենից սպանված էր։

— Ո՛ր է, ինչ էք լուել, ո՛ր է ասեցէք թէ չէ բոլորիդ ուսանում եմ և յարձակւելով պառաւրդ վրայ բռնեց նրա օձիքից, իսկ պառաւրդ երկիւղից դողալով ցոյց տուեց Վարդիկին, «Ահա, Վարդիկը, Սասունցի Մէհրաբի կին Վարդեսաթունը» — Այս խօսքերը այն հաբուածը տուին խեղճ ծերուկին, որ նա սաստկութեամբ ցնցուեց, փայտը ձեռքից վայր ընկաւ և մի քանի ժամանակ Վարդեսաթունին շարունակ նայելուց յետոյ գոչեց — Վարդեսաթուն, դո՛ւ, Վարդիկ... և մի քանի քայլ անելով դէպի իր կինը ընկաւ։ Նրա առաջ շնչատապաւ նա մեռաւ։ Ո՛հ, ծանր է, ծանր է։ Թագեցինք նրան։ Շատ լացեցինք խեղճի վրա, բայց լացը չը վերականգնեց մեր ընկերոջը։ Միայն մեր վիշտը քիչ թուլացաւ։

Իսկ Վարդիկը այն օրից անյայտացաւ Տփլիսից, թէ հըր գնաց, այդ մենք չ'իմացանք։ Շատ ժամանակ մենք չը կարողացանք մոռանալ Մէհրաբին և Վարդեսաթունին։ Ասում են, վերջինս երբ Տփլիս եկաւ, սկսեց աշխատել այն պառաւրդ հետմիասին, որի ուղեկցութեամբ հեռացել էր հայրենիքից, մի քանի ժամանակից յետոյ իր ուղեկից պառաւրդ վերադառնում է հայրենիք, իսկ երիտասարդ Վարդեսաթունը մնում է միայնակ Տփլիսում։ Մի քանի օր նա էլ է սովում մեզ պէս, յետոյ պատահում է այդ պառաւրդ կախարդը, որի շնորհով Վարդեսաթունը մոռանում է ամենայն բան և ընկնում է այդ ցեխում։ Կախարդ պառաւրդ Մշեցի կին է, որ ամենայն քաղաք եղած է, Պոլսից սկսած Տփլիս, Երևան, ամենայն տեղ մի քանի տարի բնակվելով։ Ահա հենց տարի է, որ դա Տփլիս է, ինչպէս պատմում են մշակները, և այն օրից սկսած Հայաստանից նոր եկած ամեն երիտասարդ կնոջ քաշում է իր կողմը և անբարոյականացնում նրանց։ Պառաւրդ մեղաւոր է, Աստուծոյ առաջ սև երես։ Իսկ խեղճ Վարդեսաթունը, որ իր Մէհրաբին սիրում էր, մեթէ նոյնպէս մեղաւոր չէ, մեղաւոր է, թէ և քաղցածութենից դա այդ մեղքը գործեց։ Կորաւ սովից Վարդեսաթունը, կորաւ և անգին Մէհրաբը կրկին սովից։ Սովը կլանեց նրանց, Վերապը լափեց այդ թշուառներին։ Բայց մեթէ միևնոյնը և մեզ չէ սպասում, մենք չը պէտք է աղքատութեան տակ

Ճնշուենք, մեռնենք, ես սարսում եմ այսպիսի մտքերից։
Բայց ողորմած Աստուածը մեզ այդ տեղը չի հասցնի,
նա մեզ կ'օգնի, միգուցէ իմ յամուտն գմաքարոցայլ ցը-
շա ցնայն ասիմ սրբիցն ոյմ սմիցցմի մի նոսա միմ

XV

Դեռ ես դպրոցումն էի ծառայում, երբ մէկ ան-
գամ գնացի Զիւլին տեսնելու Զիւն, ինչպէս վերեւ ա-
սեցի, բանում էր իմ ընկեր կապալառուի, Դրեգորի
մօտ։ Տան տէրը այն շինութիւնը, որտեղ Զիւն էր, ա-
ւարտելու համար տվել էր Նազօր Պապին քաղաքացի
կապալառուին, որը իր կողմից շինութեան համար գաջ
բերելը յանձնել էր կապալով մի հարուստ գաջաբի,
Ղազարեցի Գաւթին, պատեր, դռների և պատուհան-
ների տեղեր շինելը յանձնել էր կապալով կալատօզ
հարուստ Վանօին։ Դռներ, պատուհաններ, առաստաղը
և յատակ շինելը յանձնել էր կրկին կապալով Դարչօ
հիւսնին, իսկ գետին փորելը և հողը գետը կամ մի ու-
րիշ տեղ թափելը, տվել էր կապալով մեր երկրացի
Դրեգորին։ Այսպէս Նազօր Պապինը, գլխաւոր կապա-
լառուն, շարաթը երկու, երեք անգամ գալիս էր և հրա-
մաններ ցրվում միւս կապալառուներին, իսկ վեր-
ջիններս իրանց բանւորներին. այսպէս էր կատարվում
շինութեան գործը։ Մի երիտասարդ ուսանող բացատ-
րում էր ինձ կապալառուների նշանակութիւնը այսպէս.

Յարօ, ասում էր նա, քեզ լաւ յայտնի է, որ առանց
աշխատանքի ոչ մի գործ չի կարող կատարուել երկրիս
երեսին, իսկ աշխատելիս պէտք է գործ դնել ոյժ։ Ոյժը
լինում է Փիղիքապէս, ձեռքերդ, ոտքերդ մէջքդ, մի
խօսքով, միանունքներդ գործ դնելով, ոյժը լինում է և
մտաւորապէս, խելքդ, գետնութիւնդ և հմտութիւնդ
գործ դնելով։ Ուրեմն մարդ իր կեանքի բարեխառ-
թեանը խիղճով և բարոյապէս հասնելու համար պէտք է
աշխատէ կամ Փիղիքապէս կամ մտաւորապէս և կամ
թէ Փիղիքապէս և թէ մտաւորապէս միասին։ Եթէ մարդ
այդպէս աշխատելիս ուրիշին վնաս չէ տալիս, այլ օգուտ՝
ուրեմն այդպիսի մարդը կոչվում է բարոյական։ Իսկ այն
մարդը, որ ինքն առանց աշխատելու ուրիշի աշխատան-
քով է ապրում կամ կիտում հարստութիւն, կամ եթէ
աշխատում է ի վնաս ուրիշին է գործում, այդպիսի մար-
դը անվանվում է գող, աւաղակ, դատարկապորտ կեն-
դանի, ուրեմն և անբարոյական։

Հայն էլ մարդ է, Փուրդն էլ։ Այդ երկուսի կեան-
քը Աստուած պահելու համար տվել է կերակրվելու
միջոցներ, հող, սերմ, գութան և օդնական անասուն-
ներ, մի և նոյն ժամանակ տվել է դրանց, ոյժ ձեռ-
քերում, ոտքերում, մէջքում և գլխում մտաւոր ոյժ.
քաղցած են, դիցուք, ուզում են կերակրվել՝ պէտք է
վերցնեն գութանը՝ լծեն գոմէշները նրանում, քշեն
նրանց դաշտը մի և նոյն ժամանակ ձեռքերի ոյժով

խրելով գութանի երկաթը հողում, այսպէս կըստանան հող, որտեղ պէտք է ցանեն ցորենը և մի քանի ժամանակից և մի քանի ծանր աշխատութիւններէց յետոյ կստանան ցորեն աւելի առատ, որով կը լցուցանեն իրանց քաղցը։ Ուրեմն իրանց քաղցը լցուցանելու համար Հայն էլ պէտք է աշխատի Բուրդն էլ։ Եթէ Հայը չի ուզենայ աշխատել, այլ կը ցանկանայ Բուրդի աշխատանքով ապրել, պէտք է այդ Հայուն պատժել իր անգործունէութեան և ուրիշի աշխատածը յափշտակելու համար, նոյնը պէտք է անէ Հայը, եթէ Բուրդը կը կերակրվի Հայի աշխատանքով կամ նրա աշխատածը յափշտակելով։ Բուրդը և Թուրքը այդպէս են վարվում ձեզ հետ։

Հիմա դանք կապալառուներին։ Ի՞նչ են դրանք, անկասկած ուրիշի աշխատանքով ապրողներ։ Վերցնենք այն շինութեան մշակներին, որտեղ Զիօն է։ Ամենազինաւոր կապալառուն, Եագոր Պաւլիչը, տանտիրոջից վերցնում է ահագին գումար այդ շինութիւնը աւարտելու։ Ի հարկէ, իբրեւ այդ բանում փորձված մարդ, տանտիրոջից աւելի կը պահանջի, քան, որքան կը հարկաւորի շինութիւնը աւարտելու համար, իբրեւ իր աշխատանքի վարձատրութիւն։ Բայց ինքը շատ և շատ աւելի է ստանում, քան այն՝ որքան արժէք նրա չնչին աշխատանքը։ Դրա աշխատանքը կայանում է նրանում, որ մի օրում ժողովում է իր շուրջը երկրորդական

կապալառուներին, յանձնում է նրանց գործը իւրաքանչիւրի մասնագիտութեան համեմատ, իսկ վերջիներս ժողովելով մշակներին արհեստաւորներին մի օրում յանձնում են գործերը դրանց, ի հարկէ աւելի պակաս վարձով, քան, որքան հասնելու էր տանտիրոջից կամ գլխաւոր կապալառուներից ստացած փողերից՝ սրանով սահմանափակում են իրանց աշխատանքը տան աւարտելում։ Եւ բոլոր կապալառուները վերջացնում են գործը շարաթը մէկ անգամ բանւորներին աչքի տակ անցնելով և հարկւրաւորներ ծալած ըուբլիները գրպանը դնելով։ Բայց ի՞նչ է ստանում նոյն ինքն գործը, տունը աւարտողը, կալատողը, հիւսնը, մշակը, այնքան, որ կարողանայ գնել մի կտոր չոր հաց, խոնաւ և մութ սենեակ վարձել և որ պատրաստ լինի գործ չեղած կամ հիւանդ ժամանակը Աբրահամու գողը գնալ։

— Ի՞նչպէս, Պարոն Վահան, միթէ կապալառուները ճանապարհներ, խելք չեն սովորեցնում բանւորներին կամ արհեստաւորներին։

— Ինչ խելք, դարձաւ նա ինձ, միթէ կապալառուն մշակներին բանել, աշխատել սովորեցնելու համար առաջ ինքն է փորում հողը, կամ ցեխ շաղխում կամ պատ բարձրացնում կամ դռներ շինում։ Ո՛հ։ Այլ, ասում եմ, որ նրանք շարաթը մէկ կամ երկու անգամ գալիս են միայն բանողներին աչքի տակ անցնելու և տանտիրոջ աչքին երեւալու համար ուրիշ ոչինչ։

— Լաւ, եթէ կապալառուներ չը լինին, ապա խնդ-
պէս պէտք է լինի:

— Ահա ինչպէս, Յարօ: Առաջ ասեմ ձեր մշակնե-
րի մասին:

Գիցուք տասը մշակ է հարկաւոր տանտիրոջ հողը
փորելու և թափելու համար և դիցուք թէ տանտէրը
կամենում է, որ այդ աշխատանքը կատարուի կապա-
լով, այդ ժամանակ կապալը պէտք է վերցնի ոչ թէ
մէկը այդ տասնից, որ աշխատանքը կամ վնասը դա
միայն ստանայ, այլ տասը միասին, որ աշխատանքը և
վնասը բոլորի վրա բաժանվի: Ի հարկէ, կապալը մէկ
այնպիսի բան է, որ շատ զգուշ պէտք է լինել վերցնե-
լիս: Իսկ արհեստաւորները՝ նոյնպէս պէտք է ընկերու-
թեամբ վերցնեն, ապա թէ ոչ մէկը վերցնելով կապա-
լը նա աշխատում է բանւորի վարձը որքան կարելի է
պակասեցնել և եթէ օգուտ կայ միայն ինքը վերցնել:

Այս մտածմունքները յիշեցի Զկօյի սենեակը գնա-
լիս, որ գտնվում էր նոյն շինութեան մէջ որտեղ
ինքն էր բանում: Այդ սենեակը նոր շինվող տան մօտի
հին տան դեռ չը քանդած սենեակներից մէկն էր:

Դրացի սենեակները քանդած լինելով դրա պա-
տերը երկարութեամբ կիսով չափ քանդուած էին, տա-
նիքի հողը մեծ մասամբ թափել էր, այնպէս, որ այն
գիշեր, երբ գնացի Զկօյի մօտ լուսնի ճառագայթները
ազատութեամբ թափանցում էին սենեակը, իսկ անձ-

ըններին, ինչպէս այնտեղ բնակվողներն են ասում, հո-
ղի լատակը ծածկվում է լճակներով: Սենեակը շատ
նեղ էր և երկար: Տախտերը տեղաւորած էին աջ և
ձախ սենեակի երկարութեան վրայ, իսկ տախտերի
վրա սլիւռած էին տասնևհինգ հոգու համար անկողին-
ներ: Բարձերի տեղ ծառայում էին հարգով լցրած պար-
կեր, դօշակները ահագին, լայն պարկեր էին (խաւար):
Նոր խոտով լցրած, իսկ վերմակները կարմիր կոպիտ
կտաւից էին, բրդից կարած: Տանը ուրիշ կարասիք չը կար
բացի անկողիններից և փոքրիկ արկղներից, որտեղ պա-
հում էին մշակները իրանց փողերը և ուրիշ մանրմունք
բաներ: Զէնքի հոտ այնտեղ բոլորովին չը կար: Երբ ես
մտայ սենեակը տեսա՝ մշակներին խմբված մէկ մշակի
շուրջը: Ես ևս մօտեցայ խնբին և ողջոյն տալուց չետոյ
սկսեցի լսել խօսողին, որ հազարաւոր գլխանի վիշապ-
ների, վեց ոտանի ձկանների և երեք գլխանի դարվիշ-
ների մասին հեքիաթներ էր պատմում: Մշակները մեծ
ուշադրութեամբ լսում էին պատմողին, երբեմն ծիծա-
ղելով խմբովին, երբեմն բարկանալով հեքիաթի հերո-
սին բարկացնողի վրա: Զկօն դրանց մէջը չէր: Երբ վեր-
ջացրին հեքիաթը ես հարցրի Զկօյի մասին: Զկօն գնա-
ցել է հաց բերելու, ասեցին նրանք: Հարցրի նրա ա-
ռողջութեան մասին: Ասացին, որ նա շատ տխուր է և
շատ քիչ է խօսում: Չը նայելով Զկօյի կծու վարվողու-
թեան՝ նրան շատ էին սիրում մշակները նրա քաջու-

Թեան, նրա խելքի և սիրող սրտի համար: Պատմում էին, որ մօտիկ ժամանակներում, երբ իրանց ընկերներն էին մի քանիսները, որոնց մէջ և Զկօն էր, վերադառնում էին Տփլիս, Կոջորում մշակութիւնը վերջացնելուց յետոյ, ճանապարհին պատահում են երեք քաղաքացի երկտասարդների և որոնք ընկերանում են նրանց: Մէկը այդ երկտասարդներից շալակին ունէր մէկ պարկ լի չք գետէին ինչով: Ճանապարհին նստում են աղբիւրի մօտ հանգստանալու և այդ ժամանակ ամեն մէկը մշակներից համարելով իր աշխատած փողը յանձնում է մէկին պահելու համար: Քաղաքացիք այդ տեսնում են: Հանգստանալուց յետոյ շարունակում են ճանապարհը: Քաղաքացիք և այն մշակը, որին յանձնած էր փողերը քիչ յետ են մնում: Չէ անցնում քիչ ժամանակ յանկարծ լսում են իրանց ընկերոջ աղաղակը և յետ նայելով տեսնում են, որ քաղաքացիք յետ էին վազում, իսկ իրանց ընկերը մօխիւրով աչքերը լցրած աղաղակում էր «փողերը տարան, օգնեցէք»: Պարկում մօխիւր էր եղել: Բոլորը թէ երկիւղից, թէ զարմանքից տեղից չեն շարժվում, իսկ Զկօն դազանակը ձեռքին կատաղած վազում է գողերի յետևից, հասնում է նրանց և նրանց մէջ ծագում է արիւնհազեղ կռիւ: Զկօն հաւուածը հարուածի յետևից դազանակով հասնում է սրերով կռվող աւազակներին: Ահա մէկը աւազակներից գլուխը կտրած ընկնում է Զկօյի հարուածի տակ, ահա

միւսն էլ ընկնում է, իսկ երրորդը փախչում է, բայց Զկօյի հարուածը աւազակի գլխին գետին է տապալում նրան: Մօտենում են և միւս մշակները, վերցնում են յափշտակածը և շարունակելով ճանապարհը հասնում են Տփլիսի առանց մի ուրիշ փորձանքի պատահելու:

Ահա ինչու համար էին սիրում մռայլ Զկօյին:

Իայց և մէկը նրանցից, Յակօն, չէր կարողանում հասկանալ, որ մթթէ կարելի է այնպէս յուսահատվել աղքատութիւնից, որ տխրել միշտ, չը խառնվել ընկերական խաղերին և միշտ անհանգիստ լինել անմխիթար մտածմունքներով, ինչպէս Զկօն էր անում:

Յակօ, դարձայ ես նրան, ինչու համար ես եկել մշակութեան:

— Պարտքերիս պատճառով:

— Ո՞րքան է պարտքդ, Յակօ:

— Տասն և վեց թուման:

— Լաւ, մէկ տարուց յետոյ ո՞րքան պէտք է տաս:

— Շահով միասին 24 թուման:

— Իսկ եկող տարին ո՞րքան պէտք է տաս:

— 24 թուման և դրա կէսի հետ միասին, այսինքն

36 թուման:

— Ո՞րքան տարի է, որ վերցրել ես պարտքը:

— Տասը տարի կը լինի:

— Իսկ այդ ժամանակի ընթացքում ո՞րքան տուած կը լինես պարտատիրոջ:

— Շատ, Յարօ ջան, չը գիտեմ, կարծեմ, աւելի քան 30 թուման: — Իսկ դու սկզբում հրքան էիր վերցրել, Յակօ: — Սկզբում վերցրել էի երկու թուման, Յարօ ջան: — Հետզհետէ շատանում է, թէ քանում է պարտքը, Յակօ: — Շատանում է, Յարօ ջան: — Լաւ, բայց երբ կազատվիս պարտքերդ, Յակօ: — Շատ տարիներեց յետոյ: — Շատ տարիներեց յետոյ, պարտքերդ աւելի կը շատանան, այնպէս չէ Յակօ: — Կը շատանան, քան, Յարօ ջան: — Մի ժամանակից յետոյ դու անկարող լինելով պարտքերդ տալ պէտք է ասես պարտաիրօջդ, որ չես կարող տալ այնպէս չէ: յետոյ քնէ կանէ քեզ պարտատէրդ Յակօ: — Ի՞նչ կանէ, որ, Աստուած տունս, տեղս, և գոմշուկներս կը ծախէ անհոգին: Բ՛արժանի ի՞նչ: — Եւ քեզ բանօր կը ձգեն, կամ բոխօղկին կ'աղքատանաւ, հասկանում են, Յակօ: — Հասկանում եմ բաս, Յարօ ջան: — Յետոյ դու կարող կը լինես ուրախանալ: — Կ'երթամ գետում կը խեղդակեմ: — Իսկ Ձկօն կարող է այժմ ուրախանալ, երբ նրա բոլոր հարստութիւնը խլել են ձեռքից: —

— Ո՛հ, ո՛հ թշվառ Ձկօ, թշվառ Ձկօ: — Ո՛հ, թշվառ Ձկօ, թշվառ Ձկօ, ամեն կողմից բացագանչեցին մշակները հողոց հանելով: Այս միջոցին ներս մտաւ Ձկօն հացերը բազիլ տակին: Նա այնքան մռայլ չէր, որքան առաջ: — Ո՛հ, Յարօ, հոգիս դու այստեղ ես, քնչու չես գալիս ինձ մօտ, այլ ևս չես սիրում ինձ: — Սիրում եմ, Ձկօ ջան, բայց չէի կարող դպրոցից դուրս գալ, արգելած էր այդ ինձ: Իսկ հիմա բոլորովին թողնելու եմ դպրոցը: — Ի՞նչու, Յարօ: — Ութ բուրլի են տալի, Ձկօ ջան, մինչև երբ պիտի ծառայեմ այդ ոռճիկով, որ կարողանամ այնքան փող հաւաքել, որ կարելի լինի պարտքերիցս ազատվել: — Հիմա հրքան, ունիս, Յարօ: — Տասը բուրլու չափ: — Վաղը մեր տղերանցից գնում են հայրենիք, մենք պատրաստվում ենք թուղթ փողը, ոսկու հետ փոխել և ուղարկել հայրենիք: — Ես էլ կ'ուղարկեմ: Բայց իմ քեզ է ես Մկօյից պարտք կը վերցնեմ 20 բուրլի: — Գնանք, ասաց Ձկօն և դուրս գնաց: Նրան հետեցին չորս ուրիշ մշակներ և ես: Երկուսը մեզանց առաջ գնացին: Նրանք փոխում էին ոսկիները, իսկ մենք

քիչ հեռու կանգ առանք և սարսուռ էինք ընկերներս, մինչև նրանք կը վերջացնէին փոխելը:

Այդ ժամանակ մօտեցաւ մեզ մէկ շատ լաւ հագնուած աղա և հարցրեց մեզ, թէ մենք էինք կամե՞նում ոսկիներ: Երբ մենք դրականապէս պատասխանեցինք նա ասեց, որ ինքը շատ ոսկիներ ունէ և գընող չը կայ, եթէ մենք կը կամենայինք նա շատ էժան կը փոխէ:

— Դուք, սիրելիք, ոսկին գնումէք իւրաքանչիւրին 9 կամ 10 ըուրլի տալով, ես կը տամ տաս ըուրլով երեք հատ: Տեսնելով ձեր խեղճ դրութիւնը սիրտս ցաւում է, այդ պատճառով ես համաձայն եմ մինչև անգամ այս երկու փաթեթ ոսկին տալ ձեզ՝ վերցնելով ձեզանից այնքան, որքան ունէք, եթէ ձեր ունեցածը մինչև անգամ լինէր 90 ըուրլի:

— Աբա տեսնենք ոսկիները, ասաց Զկօն:

— Վա՛, չէք հաւատում, որքան ապերախտներ էք ձեզ լաւութիւն անողի վրա կասկածում էք, չէք ամաչում:

ձերտ որ մենք ամաչեցինք կրկնելու մեր խնդիրը և շատ ուրախ էինք, որ պատահեցինք այդպիսի լաւ բաղդի:

— Կնքած է, սիրելիք, թէ չէ լինչու չէի բանալ, ահա տեսէք այս ոսկին բոլորովին նոր է, այս ասելով պատռեց նա փաթեթի երեսին եղած թուղթը և փայ-

լուն նոր ոսկին երևաց: Ես վերցրի աղայից ոսկիները և մեր փողերը տալուց յետոյ դարձանք ուրախ տուն: Մեր բաղդի վրա զարմացան միւս մշակները, բայց մենք աւելի զարմացանք, երբ բաթեթներում ոսկու տեղ տեսանք կլոր կտրած երկաթներ: Կորաւ 60 ըուրլին, Այս էլ կորպեց անհագ Վիշապը:

XVI

Շինութիւնը, որտեղ բանում էր Զկօն, արդէն աւարտված էր: Եւ ես թողել էի դպրոցը: Կրկին առանց փողի, կրկին քաղցած սխեցիւնք տնից տուն, խանութից խանութ թափառել ես և Զկօն: Մշակներից մէկդանից չորրորդ օրն է առաւօտը վաղ գնալով կէս օրին վերադառնում ենք, առանց վարձվելու, առանց գործի: Գնում ենք ալիւրի մէյդան, ալիւր կրելու՝ այնտեղի մշակները մեզ արգելում են այդ անել, գնում ենք քսրվանսարաներ գործ խնդրելու՝ այնտեղի մշակները մեզ արտաքսում են, գնում ենք բաղանիքներում գործ փնտռելու՝ բանուորները դռները փակում են և չեն ընդունում մեզ: Ամեն տեղ մերժում, ամեն տեղ զրկանք, ամեն տեղ բռունցքներ: Եւ մենք անգործ ենք և մենք սովում ենք:

Ահա մենք վերջապէս վարձվեցինք փողոցների աղաք, ցեխը մաքրելու: Առաւօտից մինչև երեկոյ տաս-

նից մինչև քսան հոգի բանում ենք: Մեզ հետ բանում են ասորիներ, վրացիներ, ռաներ և հայեր:

Հայերը մենք ենք: Յիշում ես հայրենիքդ, յիշում ես ընտանիքդ, յիշում ես և սիրելիներդ ու արտասվում: Եւ արտասվելով մաքրում ես ցեխը: Յանկարձ աչքերդ մթնում են, յետոյ զգում ես ցաւ, այդ հպարտ պճնասէրի բռունցքիցն էր, որ իջեցրեց գլխիդ անզգուշութեամբ նրա մաքուր հագուստը քիչ աղտոտելուդ համար: Խնդրում ես նրանից ներում, իսկ նա բարկանալով երկրորդ բռունցքն է իջեցնում գլխիդ: Եւ դու լուծում ես, խօսես, երրորդ հարուածը կը դա: Յանկարձ կանացի ձայնով հայհոյանք ես լսում լինէի, քո աւելած փոշին նրան հազ է պատճառել: Յանկարձ հարուած ես զգում գլուխդ թըջվում է լակ ձվով, լակ ձմերուկով կամ հոտած, փթած յրգերով, հետ ես նայում խփող կինտոները ծիծաղում ու խնդում են:

Հիմա ձմեռ է, մենք այստեղ մնացինք, որովհետեւ փող չատ քիչ ենք հաւաքել: Հիմա ձիւն ենք քերում, հիմա տիկինը չի հազայ մեր աւելած փողուց: Անցորդ տիկինը հիմա չի նեղանում, մենք ենք նեղանում, մըսում ենք, կապտում ենք ցրտից, բթանում են, թուլանում են մեր ձեռքերը և ոտները ցրտից, բայց մենք բանում ենք, միշտ պէտք է բանենք: Մթնում է թիակները և աւելները յանձնում ենք տիրոջը, գնում ենք տուն: Մեր տանը քսան հոգուց շատ են: Փայտ

չունենք վառելու, մենք մըսում ենք, բայց տաքանում ենք միմիանց գրկելով, շունչ շնչի տալով: Ահա հագիւ քնեցինք: Առաւօտ է կրկին նոյն տանջանք, երեկոյ է կրկին նոյն տանջանք:

Բայց վերցնում ենք այնքան վարձ, որ քիչ հաց ենք գնում, տան վարձ ենք տալի և մի քանի կոպէկ Վիշապի, մեր պարտատիրոջ համար ենք թողնում: Բայց մենք միմիանց երբ պէտք է մնանք այստեղ հաւաքելու համար այնքան, որ կարողանանք պարտքից ազատվել: Այդ Աստուած գիտէ: Անցնում է ժամանակ, այստեղ ենք կրկին, ձմեռ է, կրկին ձիւն ենք քերում, տիկինը չի հազում, բայց մենք մըսում ենք: Քերում ենք ձիւնը և դողում ցրտից: Անցնում են կառքերը կառքերի հետեւից, տանելով իրանց մէջ տաք մուշտակների մէջ թաղված աղաներին: Եւ ես նայում եմ նրանց վրա և երանի տալի: Յանկարձ մի ձայն ինձ արգելում է նայել գոչելով՝ «մաքրիր շուտ»: Եւ ես մաքրում եմ, Բայց թիակը ընկնում է ձեռքիցս և ես ընկնում եմ: Անցնում է ժամանակ, բացում եմ աչքերս և տեսնում եմ շուրջս բազմաթիւ մարդիկ, որոնք կարեկցաբար հարցնում են իմ չնչին առողջութեան մասին: Ես չեմ հասկանում այս հրաշքը: Մինչև այժմ Յարօյին չէին ճանաչում, չը գիտէին Յարօ կայ աշխարհի երեսին, թէ ոչ, իսկ այժմ բոլորը հետաքրքրվում են իմ առողջութեամբ:

Մօտենում է Զիօն արտասուքն աչքերին «Բնչպէս
ես, Յարօ ջան, Բնչդ է ցաւում» — ոչինչ, Զիօ, Բնչ պէտք
է ցաւի: — Ախր կառքը քեզ ջարդեց: — Ան, հիմա հաս-
կացայ այդ հրաշքի սլասճառը, բայց, Զիօն սխալում
էր, ես չը ջարդվեցի, միայն գլուխս քեզ ցաւում էր,
որի պատճառը իմացայ կառապանից, ձին իր գլխով
իմ գլխին խփել էր, երևի ողջունում էր ինձ խեղճը,
որով օրինակ տուեց մարդոցը ինձանով հետաքրքր-
վել: Իջաւ կառքից մի շատ հաստ աղա, կարծիր
դէմքով, գեղեցիկ արխալուղով, փայլուն ոսկեայ
շղթայով և սպիտակ արծաթէ փողերը ձեռ-
քին մօտեցաւ ինձ: Ականջիս փսփսաց «չը գանգա-
տուիս» և ձեռքիս դնելով փայլուն արծաթները,
նստեց կառքը և հեռացաւ: Ես ուրախացայ և ուրա-
խութիւնիցս տաքացայ իսկ տաքութիւնիցս սկսեցի աւելի
ժեր աշխատել: Կինտօները դադարեցին ինձ փթած
մրգերով հրաւիրել, գլուխս մինչև երեկոյ չը թրջվեց
լակ ձուկից, լակ ձմերուկից և ձնագունդներէից, երևի
վախենում են այն աղից, որ ինձ փողեր տուեց: Երեկոյ
է, վերջացրինք գործերս, յանձնեցինք տիրոջը թիակ-
ները և պատրաստվում էինք գնալ տուն: Այդ միջոցին
մօտեցաւ մեզ մի աղա և ասեց, որ իր աղէն կանչում
է: Հետևեցի ես նրան, իսկ Զիօն տուն գնաց: Մտանք
մի հարուստ փառահեղ տուն: Տեսնեմ, ոսկիներ տվող
աղէն այն տեղ: Նա ինձ կանչում է:

XVII

— Որդի, դարձաւ ինձ աղէն, ես բոլորովին մեղա-
ւոր չէի, որ կատաղած ձիաները քեզ իրանց ոտքերի
տակը գցեցին: Դու լաւ գիտես, որդի, մեր կառապան-
ների անպիտանութիւնները, որքան ասեցի ես նրան,
որ հանդարտ տանէր կառքը, նա չը հնազանդվեց և
այդպէս քեզ նեղութիւն պատճառեց:

Իսկ ես աղայի քաղցը խօսակցութիւնով զմայլած
ոչինչ չը կարողացայ ասել, միայն ժպտացի և ուրա-
խութիւնիցս ծիծաղեցի: Աղան, չը կարողանալով, կար-
ծեմ, հասկանալ ծիծաղելուս պատճառը հարցրեց «գը-
լուխդ չի ցաւում արդե՞ք», ես պատասխանեցի, որ չէ:
Նա հանդարտվեց: Յետոյ, դառնալով ինձ՝ ասեց, որ ես
չը գանգատվիմ դատարանում, այն նեղութեան հա-
մար, որ պատճառեցին ինձ իր ձիաները: Այդ խնդիրը
նա մի քանի անգամ կրկնեց: Միթէ նա վախենում էր
իմ գանգատվելուց ձիու հարուածի պատճառով: Բայց
նա չը գիտէր, որ մեզ ամենը, ամեն տեղ խփում են,
հալածում և շատ անգամ սպանում են առանց վախե-
նալու տէրութեան պատժից: Թուրքը, քուրդը, չէրքէզը
խփում է մեզ առանց վախենալու, կինտօն խրփում
է մեզ ծիծաղելով, ու խնդալով, պճնասէրը ջարդում
է մեր գլուխը բռունցքներով, մեծ հպարտութեամբ, ա-
մաչելով, որ մեզ արժան է համարում խփելու:

է՛հ, աղա, մի վախենայ մեզանց:

Մինչ ես այս մտածում էի՝ աղան, երկար լռութիւնից յետոյ, առաջարկեց ինձ մնալ իր տանը ծառայելու և խոստացաւ ինձ լաւ վարձատրել: Ես համաձայնեցի. ինձ տարան ծառաների համար նշանակած սենեակը: Այնտեղ երեք ծառաներ կային: Յետոյ տեղեկացայ, որ մէկը նրանցից խոհարարն էր, միւսը սենեակներ մաքրող, սեղան պատրաստող և կերակուրներ մատուցանողն էր, իսկ երրորդը ամեն տեսակ փոքրիկ ծառայութիւններ կատարողն էր: Միւս օրը մեր սենեակում բացի խոհարարից ոչ ոք չը կար: Ես վերջինից հարցրի միւսների բացակայութեան պատճառը և նա ինձ ասեց, որ նրանք արձակուլած են, և որ նրանց պաշտօնը ես պէտք է կատարեմ: Ի հարկէ այս լաւ էր ինձ համար, որովհետեւ երկու ծառայի պաշտօն կատարելով, երկու ծառայի վարձ կը ստանայի: Երկու օր ինձ արգելած էր աղայի դահլիճները մտնել մաքրելու համար: Յետոյ տրեխներս, կեղտոտ շորերս ասելի կը կեղտոտէին նրանց մաքուր դահլիճները, քան թէ կը մաքրէին: Բայց և այդ արգելած ժամանակը ես անգործ չէի նրանց տանը: Առաւօտը կանուխ ինքնաեռը պատրաստում էի թէյի համար, իսկ աղայինը թէյով լի բաժակները մատուցանում էր տան պարոններին: Յետոյ աղայի աղջիկներին տանում էի ես ուսումնարան: Յետոյ գալով տուն կաթսաները մաքրում էի մի տեսակ հողով, այս աշ-

խատանքը տեղում էր մի քանի ժամ, կաթսաների բազմութեան պատճառով: Այս գործը վերջացնելուց յետոյ ձիաների համար դարի էի բերում բազարից: Իսկ ճաշից յետոյ ձիաների և տան աղալը թափում էի, որը տեղում էր մինչև մթնանալը: Երբ մթնանում էր՝ մի քանի գործեր կատարելուց յետոյ 9 զոյգ կոշիկներ էի վաքսում և մաքրում: Մէկ խօսքով, ամբողջ օրը հինգ ռոպէ հանգստութիւն չունէի: Բայց այս բոլորը քեզ էր համեմատելով այն գործերի հետ, որ յետոյ ինձ յանձնվեցաւ: Մի օր տանտիկինը հրաւիրված էր մէկի մօտ, բայց իրան հետևող ծառայ չըկար: Կանչվեցաւ Յարօն այդ պաշտօնը կատարելու, բայց նրա հագուստը յարմար չէր դրա համար: Տիկինը հրամայեց աղայի հին հագուստները բերել, որտեղից ես պէտք է ընտրէի ինձ յարմար հագուստ: Կէս ժամից յետոյ տրեխներս փոխվեց հին կիսակոշիկների, լայն վարտիքս նեղ վարտիքի, յետոյ արխալուղ, դրա վրայից կապայ, իսկ քոլոզս փոխվեց իւղոտ, բայց գեղեցիկ գլխարկի (շապկայի): Եւ այսպէս ես դարձայ կատարեալ աղա, իսկ տիկնոջ կարծիքով դեռ կատարեալ չէի, որովհետեւ ժամացոյց չունէի: Այդ պատճառով բերեց նա մի շղթայ և ամբարեցեց արխալուղիցս, ասելով, որ եթէ ինձ հարցնեն «որ ժամն է» պէտք է ասէի «ժամացոյցս կանգնել է»: Տանտիկնոջը, ի հարկէ, այն գիշեր յաջողեց գնալ հրաւիրված տեղը՝ ունենալով հետեւեցը քայլող ինձ պէս

փայլուն աղային։ Այնուհետև նրանք յամարձակվում էին ինձ այս հագուստովս ամենայն տեղ ուղարկել, առանց ամաչելու։ Բայց և այս հագուստը աւելացրեց ինձ համար անթիւ գործեր աղայի մօտ կատարելու։ Այժմ պէտք է թէյը ես պատրաստեմ և մատուցանեմ պարոններին, սեղանը պատրաստեմ, սենեակներ և դահլիճները մաքրեմ, ճաշից յետոյ կրկին աղա թափեմ։ Վերջին դէպքում ես աղայի հագուստը փոխելով դառնում էի կրկին աղա թափող Յարօն։ Ամենածանր աշխատութիւնը, որ ինձ չարչարում էր մինչև շնչասպառութեան՝ այդ, յատակները մեղրամոմէն էր։ Ոտքերիս պէտք է հագնէի մոմած վրձիններ և յատակի վրա պէտք է ոստոստնէի։ Իսկ ոստնու մոմած վրձիններով այնքան վտանգաւոր էր, որ մի քանի անգամ քիչ մընաց գլուխս կոտրէի։ Թէ և գլուխս չը կոտրեցի, բայց քիթս, մինչև գործը վերջացնելը, հինգ անգամ յատակին զարկեցի՝ հինգ անգամ էլ արնեցի։

Այդ պաշտօնումս էլ երկար չը մնացի։ Կարծեմ, աղայի և տանտիկնոջ խորհուրդը ինձ անընդունակ համարեց տնային նուրբ գործեր կատարելում և այդ պատճառով աղայի հագուստը փոխվեց բոլորովին Յարօյի առաջուայ հագուստի և դրանում Յարօն մնաց աղայի տանը, աւելի քան երկու շաբաթ աւելի կոպիտ գործեր կատարելու։ Կաթսաներ և կոշիկներ մաքրելը, ինքնաեռ պատրաստելը, գարի, խոտ և ուրիշ ծանր բաներ

բազարից բերելը և վերջապէս աղա թափելը աւելի արժան համարվեցաւ ինձ յանձնել։ Այս բոլորը կատարում էի ես, ի հարկէ, ինչպէս ինձ հրամայվում էր։ Այս պաշտօնումս էլ երկար չը մնացի։ Մի օր աղան ինձ կանչում է և ասում հետեւալը.

— Տեսնելով, Յարօ քո խեղճ դուրթիւնը ես կամենում եմ քեզ մի անգամից հարստացնել։ Մեր ձիաներից մէկի վրա կը բարձես երկու արկղ լի օճարներով, թելերով, բորոցներով, ասեղներով, մատնոցներով, ծամտակներով, կը վերցնես և մահուդ, շապկացու, արխաւուղացու և սրա նման ուրիշ բաներ և կերթաս շրջակայ գիւղերը այդ բաները ծախելու համար։ Սրանց փոխարէն դու փող չես վերցնի, փող քիչ կը տան, այլ դու կը վերցնես ցորեն, գարի, իւղ և պանիր։ Դու գիտես, Յարօ, այն բաները, որ դու տանելու ես ծախելու, շատ թանգ է գնած։ Այդ պատճառով դու աշխատիր, որքան կարող ես թանկ ծախել, ապա թէ ոչ ոչինչ չենք շահվի և այդ շահից քեզ ոչինչ կամ քիչ կընկնի։

--Ես որ չը գիտեմ, աղա, իրքանով են այդ բաները գնած՝ դրանց ինչպէս կարող եմ գնահատել՝ հարցրի ես։

— Այո, շատ ուղիղ ես ասում, բայց այժմ ես դրանց ցուցակը չունեմ մօտիս և ես չեմ կարող ասել որքանով են գնած դրանք, բայց և այնպէս դու կարող

ես մէկ մատնոցի փոխարէն 15 ձու կամ կէս փութ ցորեն պահանջել, նալած գնողներին, թէ թնչպիսի մարդիկ են:

Ես, ՚ի հարկէ, մեծ ուրախութեամբ համաձայնեցի աղայի առաջարկութեանը, մանաւանդ, որ վերջապէս գտայ աղբիւրը մեծ հարստութեան, ինչպիսին է վաճառականութիւնը:

Երկու օրից յետոյ, աղայի յանձնարարութիւնները աւարտելով և բոլորովին պատրաստ լինելով՝ ճանապարհ ընկայ դէպի մօտակայ գիւղերը վաճառականութեան: Ես երկար ու բարակ չեմ պատմի թէ ինչպիսի դժուարութիւնների պատահելով և ինչ գրկողութիւնների ենթարկվելով, վերջապէս ինձ յաջողեց ծախել մէկ ձիով տարածներս և մի քանի ձիաներով և սայլերով բերել գնածներս և աղայի անկեղծ ու մեծ գովասանութեան արժանանալս: Իմ բերածներն էին ցորեն, գարե, իւղ, պանիր, ձու մինչև անգամ հարդ: Աղան բերածներիս իւրաքանչիւրից վերցրեց պաշար, որքան ինքը բաւական համարեց թէ ընտանիքի և թէ ձիաների համար: Իսկ մնացածները մտադրվեց վաճառել մէյդանում, որի համար ինձ հրամայեց փոխել հագուստ, հագնել գիւղացի թուրքի տեսակ և վերջը սաստեց ինձ թուրքերէն խօսել առանց հայիրէն մէկ խօսք արտասանելու:

Նախ քան վաճառելու բաները, բազար տանելը,

աղան ինձ հետևեալ խրատները տուեց, որ իր միւս խրատներէն պակաս հանճարեղ չէր. նա ինձ սովորեցրեց, որ եթէ գնողներէ, մի որ և է գին տալու ժամանակը ինքը, աղան կը մօտենայ, իբրև անձանթ մարդ և կ'առաջարկէ ինձ աւելի մեծ գին, քան միւսները ես պէտք է մերժէի ամենայն գին մինչև աղայի առաջարկած գնի հասնելը կամ աւելի լաւ մինչև նրանից աւելի շատ տուողը: Այս միտքը այնպիսի յաջողութեամբ իրագործվեց, որ ես շատ և շատ զարմացայ: Զարմանալի էր, ինչպէս միւս գնողները աղայի ջգրու գինը կրկնապատկում էին և աշխատում էին մէկ մէկու ձեռքից խլել իմ վաճառելու բաները: Իսկ ես այդպիսի դէպքերին նայում էի աղայի համաձայնութեան նշանին, որը աչքով էր անում, երբ պէտք էր համաձայնել գնողի հետ: Առաջ այս խորամանկութեան վրա ես հիանում էի, բայց յետոյ երբ լաւ մտածեցի դրա վատ հետևանքների վրա՝ սարսեցի և այդ օրից աղան կ'օրցրեց իր յարգանքը իմ աչքին և ես նրան գող համարեցի: Բայց որքան սարսեցի երբ ինձ էլ մանակից տեսայ այդ գողութեան մէջ: Ո՛հ սարսափելի էր: Այդ չէի արել, այդ էլ արեցի: Բայց անգիտակցաբար, ակամայ: Իսկ ակամայ մեղքերը թողութիւն են գտնում Աստուծոյ առաջ: Վերջին միտքը ինձ մխիթարում էր: Իմ բերած բաներս վաճառելուց յետոյ ես աղայի տանը երկու շաբաթ էլ ծառայեցի: Բայց այս թնչ ծառայել էր

իմ կողմից: Ծառայութիւնը ահա՛մայ, թոյլ և զգլեւով էի կատարում: Աղային ատում էի, իբրև խաբեբայի, գողի, նրա ընտանիքին ատում էի, իբրև գողի մասնակիցներին և ես զգլում էի: Այս պատճառով միշտ մտադրվում էի հեռանալ այդ տանից և չէի կարողանում. առաջին ամաչում էի աղային յայտնել, որ ես ուրիշ գործ եմ կամենում կատարել, երկրորդ՝ էլ ուրիշ տեղ գործ չը կար: Բայց այս դժուարութիւնից հանեց ինձ աղան իր հանձարի օգնութեամբ:

Մե բարի օր, որ նոյն ձմռան վերջի ամսին կանչեց նա ինձ իր մօտ ամիս և կէս ծառայելու համար վճարելու և վճարելով տասն և հինգ ռուբլի, օրհնեց ինձ: Վերցրի այդ փողերը և խղճալով նրա յուսահատութեան վրա, որ նա իմ բերած բաներում վնասվել էր, ինչպէս ինքն էր ասում, հեռացայ «նրան շէն կենաս» ասելով:

XVIII

Աղայի մօտ եղած Ժամանակս, գործերի շատութեան պատճառով, միջոց չէի գտնում Զիօյի մօտ գնալ, իսկ նա եկել էր ինձ մօտ մէկ քանի անգամ և ինձ տանը չէր գտել, այնպէս, որ ամիս ու կէս, եթէ ոչ աւելի, ես նրա մասին ոչինչ տեղեկութիւն չունէի: Աղայից հեռանալուց յետոյ, առաջին գործս եղաւ Զիօյի մօտ գնալ: Նրան տանը չը գտայ: Ինձ ասացին, որ նա կըր-

կին փողոցներ է մաքրում և ՚ի միջի այլոց շատ տխուր է ու յուսահատված: Ես չաշխատեցի նրան այն օրը գտնել, այլ սկսեցի տնից տուն թափառել գործ ճարելու համար: Ինձ յաջողեց այն օրը 30 կոպէկ ձեռք բերել, մի քանի մանր աշխատութիւններ կատարելու համար: Երեկոյեան գնացի Զիօյի տուն: Նա նոր էր վերադարձել գործից և տախտի վրա թէք ընկած հանգստանում էր:— Ի՞նչպէս ես Զիօ, դարձայ ես նրան զգուշութեամբ, վախենալով նրա մտածմունքները խանգարել, որ ինչպէս երևում էր նրանք շատ տխուր պէտք է լինէին, որովհետև ինքը սովորականից աւելի մօռայլ էր:

— Ի՛հ, ինչ ասեմ, Յարօ, իմ ինչպիսութեան մասին, դարձաւ նա ինձ վշտացած, հոգիս դառնացել է, լեղի է դարձել: Յոյս չունեմ այս դրութիւնից ազատվելու, դրա համար մահ եմ փնտռում:

Ես շատ մեղանչեցի իմ հարցնելու համար, որովհետև նա աւելի վշտանում էր, երբ իր դրութեան մասին խօսք էր բացվում: Այս խօսքերը ասելիս, նրա աչքերը կատաղի փայլում էին, ձեռքերը բռունցքներ էին դառնում և նա անհանգիստ էր, իսկ ես վախենում և լուռ էի:

Ձմեռ էր, ցուրտը մեզ նեղացնում էր և մենք հագիւ կարողացանք քնել: Առաւօտը Զիօն իր ընկերներով գնաց գործի. փողոցները մաքրելու և ես հետեցի նրան: Խնդրեցի ես փողոցներ մաքրող կապալառուից

ինձ էլ ընդունել Ձկոյի մօտ: Նա համաձայնեց: Սկսեցինք աշխատել ձմռան ցրտին և ցեխին:

Բայց այս աշխատանքը այնքան չէր վարձատրում, որ մենք կարողանայինք, քաղաքում մեր անհրաժեշտ պիտույքները հոգալուց յետոյ, ուղարկել փող մեր պարտատիրոջ համար: Ուրիշ աւելի արդիւնաւէտ գործ չը կար և մենք պէտք է բաւականանայինք սրանով: Նոյն օրը, երբ մենք պէտք է հանգստանայինք և ճաշ անելինք, որ բաղկացած էր հացից և պանրից, մօտեցաւ ինձ Ձկօն և ասեց հետեւեալը. «Դու տեսնում ես, Յարօ, որ այստեղ մեր ստացած վարձատրութեամբ մենք չենք կարող մեր ցաւերին դարման անել, այս պատճառով ստիպված եմ համաձայնել մէկ պարօնի հետ, գելեբները նրա խանութը հսկել ամիսը 8 ըուբլով: Իսկ եթէ դու ևս կը համաձայնես այսպիսի պաշտօն կատարելու, մենք կարող ենք հինգ խանութ վերցնել, որոնց հսկելու համար խնդրում են երկու մարդ, իւրաքանչիւրին տասը ըուբլի առաջարկելով:

— ձարս լինէ է, կը համաձայնեմ, թէ և սարսափում եմ լիշելով, որ ամբողջ գելեբները մենք պէտք է արթուն մնանք ձմռան սաստիկ ցրտերին, պատասխանեցի ես Ձկօյին:

— Բայց գիտես, Յարօ, դարձաւ նա ինձ, մենք շատ չենք մըսի, որովհետեւ այդ պարօնները խօստացան մեզ տալ ոչխարու մօրթուց շինած երկու մեծ վերար-

կուններ, բացի դրանից մենք ամբողջ գելեր անքուն չենք լինի, որովհետեւ մենք կարող ենք քնել մեր ցերեկուայ գործը վերջացնելուց յետոյ, երբ դեռ լոյս է լինում մինչև խանութները փակելը, որ տեւում է երբեմն մինչև ժամի տաս երկուսը գելերուայ:

Այն օրը գործը վերջացնելուց յետոյ ես և Ձկօն գիմեցինք պարօններին յանձնել մեզ իրանց առաջարկած պաշտօնը: Յանձնեցին նրանք մեզ խանութները հսկողութիւնը և միւսնոյն ժամանակ խօստացած վերարկունները: Խանութները գտնվում էին ցիւրկի գիմացը, որտեղ առհասարակ վաճառվում են ամենաթանկագին բաներ: Ահա մենք հսկում ենք խանութները, ահա մենք «Հասաս» ենք: Յուրտ գելեբները ես և Ձկօն անցնում ենք երբեմն զանազան խօսակցութիւններով, երբեմն խանութների առաջ ման գալով: Ահա երբորդ գելերն է, որ մեզ այցելում է մէկ բարի քաղաքացի երիտասարդ, խօսում է մեզ հետ քաղցրութեամբ: Պատմում է աղքատների մասին, աւագակների մասին, և ուրիշ շատ բաներ. բերում է մեզ համար երբեմն միւրգ, երբեմն հաց, պանիր, և ուրիշ ուտելիքներ: Ի հարկէ, մենք սրանից շատ ենք շնորհակալ իւր բարութեան համար, շատ էլ յարգում ենք:

Այս երիտասարդը մէկ շաբաթ այցելելուց յետոյ, մէկ գելեր, բացեց մեզ հետ հետեւեալ խօսակցութիւնը:

XIX

Ես աղքատ ծնողներե որդի եմ: Ծնողներս փոքրութեանս ժամանակ ինձ մէկ ուսումնարան ուղարկեցին, սովորելու, բայց ես այստեղ երկար ժամանակ չը մնացի, ստիպւած էի դուրս գալ և օգնել իմ չքաւոր ծնողներին, նախ ընդունվեցի մէկ արհեստաւորի մօտ արհեստ սովորելու համար: Երկու շաբաթ ծառայում էի նրա ընտանիքում և արհեստանոցում. նա ինձ չէր վարձատրում և արհեստ էլ չէր սովորեցնում: Հօրս ասեցի այս բանը, նա գնաց վարպետից դրա պատճառը իմանալու: Վարպետը հօրս պատասխանել էր, որ իրանք նոր աշակերտին ոչինչ չեն վճարում մինչև եօթը տարի, այդ ժամանակից յետոյ, երբ աշակերտը կ'իմանայ արհեստը, ապա կարող է վարձ ստանալ: Ի հարկէ հայրս չը համաձայնվեց այդ պայմանի հետ՝ աչքի առաջ ունենալով մեր անմխիթար դրութիւնը: Յետոյ մօտայ ես մէկ վաճառականի մօտ, որը ինձ վարձատրումէր շաբաթական 20—30 կոպէկով: Ի հարկէ այս փողը չէր կարող ծնողներիս դրութիւնը գոնէ մէկ կաթիլ թեթևացնել, բայց հայրս ստիպում էր ինձ այստեղ մնալ, որովհետև որտեղ գնացի, այդ վարձից ասելի չէի ստանայ: Հայրս գործ չէր կարողանում գտնել, բացի դրանից թորախտից երբեմն շաբաթներով

անկողնից չէր դուրս գալի, իսկ իմ բերած փողը չէր կարող օգնել նրանց, այնպէս որ օրերով նրանք քաղցած էին: Շատ էի մտածում, բայց ոչ մի միջոց չէի կարողանում գտնել և ամբողջ շաբաթներ արտասովում էի, տանջվում էի, չարչարվում էի, բայց կրկին նոյն դրութեան մէջ էինք մնում՝ բոլորս: Մի օր տեսայ իմ պարոնի փողերի արկղը բաց էր և ոչ ոք չը կար խանութում: Վախենալով, դողալով ձեռքս տարայ արկղը, հանեցի մէկ ըուրլի և լաւ պահեցի ծոցումս: Ի՞նչ էք գարմանում, ապա ի՞նչ ելք կար այդ դժոխային դրութիւնից ազատվելու: Այս փողը պահեցի, բայց ամբողջ օրը անհանգիստ էի, վախենում էի, դողում էի, յետոյ գլուխս սկսեց ցաւել, աչքերս տաքանալ և ես հիւանդացայ: Իմ պարոնը տեսնելով, որ ես հիւանդ եմ արձակեց ինձ տուն գնալ: Ճանապարհին հանեցի ծոցիս փողը գնեցի հաց, թէյ, շաքար, քիչ էլ ձուկը: Հայրս հարցրեց ինձ շուտ գալուս պատճառը, ասեցի որ հիւանդ եմ. հարցրեց փողի մասին, ասեցի մեր մուշտարիներից մէկի ապրանքը ի՞նչ տուն տանելուս համար մէկ ըուրլի ընծայ ստացայ: Այսպէս վարժվելով գողութեան մէջ, ես այլ ևս չէի վախենում և յետոյ ասելի մեծ բաներ էի գողանում: Ի՞նչ էք ապշել, դուք չը գիտէք յուսահատութիւնը ինչ կարող է անել: Իմ պատմութիւնից դուք տեսաք, որ ես ուրիշ միջոց չունէի ծնողացս օգնելու համար, թէ և շատ էի ցանկանում: Ես խնդրեցի աշխա-

տանք, ինչպէս լսեցիր, աշխատանք չը կար, եթէ կար չնչին էր վարձատրութիւնը:— Այժմ շատ հարուստ եմ:

— Դու ասում ես, որ գողութիւն անենք, ընդմիջեց Զիօն վրդովված ձայնով:

— Այո, ասեց Տփիսիսեցին վճռապէս:

— Զէ, մենք այդ չենք անի, գոչեցինք անբաւականութեամբ:

— Բայց յիշեցէք, որ դուք յաւիտենական տանջանքների տակ ջախջախվելու էք:

— Յիշում ենք և կը ջախջախվենք:

— Բայց յիշեցէք, վերջապէս, որ դուք մենակ չէք, որ ձեր հոգւոյ սիրելիների դրութիւնը ձեր մահից յետոյ, վաշխառուն կը քանդէ ձեր տունը, կը լկէ ձեր քոյրերը, ձեր հարսերը:—

Մենք լռեցինք և ոչինչ չը կարողացանք ասել, իսկ ես յիշելով իմ մահից յետոյ Լուսնթազիս դրութիւնը, աղիողորմ սկսեցի արտասովել, իսկ Զիօն, երկաթի Զիօն ցնցվեց Տփիսիսեցու խօսքերից, դողաց և նա ևս արտասովեց, երկար արտասովեց:

— Ո՛չ, գոչեց Զիօն, ես պէտք է ազատեմ իմ որդիքը, կինս:

— Պատրաստ եմ դժուր մտնել Լուսնթազիս, ծընողներիս փրկելու համար, գոչեցի ես:— Ասա, ի՞նչ անենք դարձանք մենք Տփիսիսեցուն:

— Ահա այդ խանութի կողպէքը կոտրենք, այս

ասելով նա ցածր ձայնով հանեց դրպանից մի փոքր երկաթ և նրանով կողպէքը կոտրելով և խանութի դուռը բացելով, ինքը ներս մտաւ և մեզ ներս կանչեց: Մենք ներս չը մտանք, մենք դողում ու սարսափում էինք: Տփիսիսեցին տեսնելով, որ մենք ներս չենք մտնում, դուրս բերեց փողերի արկղը և տալով Զիօյին կրկին ներս մտաւ խանութը: Իսկ ես ասեցի Զիօյին «փախչենք»: Բայց նա ինձ չը լսեց, թէ և նայում էր ինձ երկար: Յանկարծ նա մէկ ձեռքով բռնեց կոկորդոս և գետին տապալելով ինձ, գոչեց «Հիմա ձեռքումս ես, Վիշապ, խեղդում եմ քեզ», այս ասելով թողեց ինձ, բարձրացաւ ծառի վրա, և այնտեղից գոչելով «եկէք, տեսէք, ուրախացէք սպանեցի Վիշապը» իջաւ ծառից և սկսեց փախչել: Նրա ձայնը լսելով հաւաքվեցին մարդիք, ոստիկաններ: Բռնեցին ինձ, փախչող Զիօյին և փախչող Տփիսիսեցի աւազակին: Տարան մեզ բանտը: Ես այժմ բանտումն եմ, Զիօն հիւանդանոցում, խելագարվել էր խեղճը, իսկ մեր թշվառութեան պատճառը, աւազակը չը գիտեմ, ո՞ր տեղ է:

Այստեղ վերջանում է Յարօյի պատմութիւնը: Այդօրից երկու շաբաթ յետոյ Խօջիվանքի գերեզմանատանից վարադառնում էին մի խումբ սգաւոր մշակներ, իմ հարցիս, թէ ո՞վ է մեռել, նրանք արտասովելով պատասխանեցին, որ իրանց երկրացի Յարօն, լսելով բանտում իր հարսի, Լուսնթազի Տ. քաղաքի փաշայի հարեմում

W. Ollerup - Jensen

բանտարկիւնը կաթվածահար լինելով մեռել էր: Տըփ-
խիսեցի աւազակը իր արդարացի պատժին ենթարկվե-
լով, աքսորված էր Սեբեր տաժանակիր աշխատութեան
համար: Իսկ Զիօն խելադար է և Գ. քաղաքի հիւան-
դանոցումն է այժմ:

միջոց իրարմ յարմար չգտնելով քանի որ իրարմ
մի 1882 թ. Հոկտ. 30:



Վ Ե Ր Զ



ՍՐԲԱԳՐՈՂԻ ՍԽԱԼՆԵՐ:

	Տող:	Երեւել:	Սխալ:	Ուղղել:
Ներքեկց	4	5	զոր	զոր
—	3	5	ըռւրել	ըռւրելն
—	6	14	հոգնած	յոգնած
Վերեկց	7	29	մոքերուում	ոտքերուում
—	10	34	Զհոն	Զհոն
—	3	50	սուտ	սուր
—	6	69	յամարձակուլթեամբ	Համարձակուլթեամբ

RECAPITULATION OF THE

Item	Quantity	Value	Total
Wheat	100	100	100
Barley	50	50	50
Oats	25	25	25
Hay	100	100	100
Grass	50	50	50
Timothy	25	25	25
Alfalfa	100	100	100
Clover	50	50	50
Straw	100	100	100
Manure	50	50	50
Seed	25	25	25
Tools	100	100	100
Buildings	50	50	50
Other	25	25	25
Total	1000	1000	1000

16683

2013

